

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ

ԵՎ

ՔԵՄՈՆԻՔՍ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ 2002

ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA

SPONSORED BY
THE COUNCIL OF EUROPE
AND
CHEMONICS INTERNATIONAL INC.

COLLECTION OF JUDGMENTS
OF EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

Մասնագիտական խմբագիր

YEREVAN 2002

Ալվինա Գյուլումյան
ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,
ՀՀ դատավորների միության նախագահ

Պատասխանատու խմբագիր

Լիանա Հակոբյան
ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ

Լեզվական խմբագիր

Աիդա Կարապետյան

Ժողովածուի մեջ ընդգրկված վճիռները անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը
Մարինա Մխիթարյանը
Սուսաննա Բաղդասարյանը
Կարինե Բալայանը

ԹՅՈՐԳԵՐ ԹՅՈՐԳԵՐՍՈՆՆ ԸՆԴԴԵՄ ԻՍԼԱՆԴԻԱՅԻ ԳՈՐԾԸ

CASE OF THORGEIR THORGEIRSON v. ICLAND

(Գանգատ թիվ 113778/88)

Դատարանի 1992թ. մայիսի 28-ի

Վճիռը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը,

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 43-րդ հոդվածի և Դատարանի կանոնակարգի համապատասխան դրույթների համաձայն նիստ գումարելով՝ որպես Մեծ պալատ, դատավորների հետևյալ կազմով՝

պրն Ռ. Ռիսդալ, Նախագահ, պրն Լ.- Ե. Փեթիթի, պրն Ռ. Մաքդոնալդ, պրն Ա. Սպիլման, պրն Ս. Կ. Մարտենս, տկն Է. Պալմ, պրն Ռ. Պեկկանեն, պրն Ա. Ն. Լոյզու, պրն Գարդար Գիսլասոն, ad hoc դատավոր,
և նաև պրն Մ.-Ա. Էյզեն, Քարտուղար, և պրն Զ. Պետցոլդ, Քարտուղարի տեղակալ,

1992թ. հունվարի 27-ի և մայիսի 28-ի դռնփակ խորհրդակցություններից հետո,

1992թ. մայիսի 28-ին ընդունել է հետևյալ վճիռը.

ՎԱՐՈՒՅԹԸ

1. Գործը 1991թ. մարտի 8-ին Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի կողմից («Հանձնաժողով») Դատարան է հանձնվել Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին կետով և 47-րդ հոդվածով սահմանված եռամսյա ժամկետում: Գործի համար առիթ է հանդիսացել Կոնվենցիայի 25-րդ հոդվածի հիման վրա 1987թ. նոյեմբերի 19-ին Իսլանդիայի քաղաքացի Թյորգեր Թյորգերսոնի կողմից Իսլանդիայի Հանրապետության դեմ Հանձնաժողով ներկայացված գանգատը (թիվ 13778/88):

Հանձնաժողովի առաջարկը հիմնվում էր 44-րդ և 48-րդ հոդվածների և

Իսլանդիայի այն հայտարարության վրա, որով ճանաչում էր Դատարանի

պարտադիր իրավագործությունը (46-րդ հոդված): Հանձնաժողովն առաջարկել

է որոշել, թե արդյո՞ք գործի հանգամանքները վկայում են պատասխանող

պետության կողմից Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և 10-րդ

հոդվածով նախատեսված իր պարտավորությունների խախտման մասին:

2. Դատարանի կանոնակարգի 33-րդ կանոնի 3 (d) կետի համաձայն կատարված հարցմանը դիմողը պատասխանել է, որ ցանկանում է մասնակցել դատաքննությանը: Նախագահը նրան իրավունք է տվել իր գործը

Ուերկայացնել անձամբ՝ իր կողմից ընտրված փաստաբանի աջակցությամբ (30-րդ կանոն):

3.Պալատի կազմում ընդգրկված էին ex officio պրն Թեոր Վիլյամսոնը՝ Իսլանդիայից ընտրված դատավորը (Կոնվենցիայի 43-րդ հոդված) և պրն Ռ. Ռիսդալը՝ Դատարանի նախագահը (21-րդ կանոնի 3-րդ (b) կետ):

1991թ. մարտի 22-ին Նախագահը, Քարտուղարի ներկայությամբ, վիճակահանությամբ ընտրել է մյուս յոթ անդամներին, այն է՝ պրն Լ.-Ե. Փեթիթին, տկն Է. Պալմին, սըր Վինսենթ Էվանսին, պրն Ռ. Մաքդոնալդին, պրն Ս. Կ. Մարտենսին, պրն Ռ. Պեկանենին և պրն Ա. Ն. Լոյզուին (Կոնվենցիայի 43-րդ հոդված և Կանոնակարգի 21-րդ կանոնի 4-րդ կետ): Հետագայում պրն Ա. Սպիլմանը փոխարինել է սըր Վինսենթ Էվանսին, որը պաշտոնաթող էր եղել և նրա հաջորդը ստանձնել էր նրա պարտականությունները Դատարանում լսումներից առաջ (Կանոնակարգի 2-րդ կանոնի 3-րդ կետ և 22-րդ կանոնի 1-ին կետ):

Նախագահին ուղղված 1991թ. հոկտեմբերի 1-ի նամակով պրն Թեոր Վիլյամսոնը տեղեկացրել է, որ ինքը դուրս է գալիս Պալատի կազմից՝ Կանոնակարգի 24-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն: Նոյեմբերի 18-ին իսլանդական կառավարությունը («Կառավարություն») տեղեկացրել է Քարտուղարին, որ պրն Գարդար Գիսլասոնը՝ Ռեյկյավիկի քաղաքացիական դատարանի դատավոր, նշանակվել է ad hoc դատավոր (Կոնվենցիայի

43-րդ հոդված և Կանոնակարգի 23-րդ կանոն):

4.Պրն Ռիսդալն ստանձնել է Նախագահի պաշտոնը (Կանոնակարգի 21-րդ կանոնի 5-րդ կետ) և, Քարտուղարի միջոցով, ընթացակարգի կապակցությամբ խորհրդակցել է Կառավարության ներկայացուցչի, Հանձնաժողովի պատվիրակի և դիմողի հետ (Կանոնակարգի 37-րդ կանոնի 1-ին կետ և 38-րդ կանոն):

Կատարված կարգադրության հիման վրա Քարտուղարը 1991թ. սեպտեմբերի 10-ին ստացել է դիմողի և սեպտեմբերի 17-ին՝ Կառավարության գրավոր բացատրությունները:

Նոյեմբերի 20-ին Հանձնաժողովի քարտուղարը Դատարանի քարտուղարին տեղեկացրել է, որ պատվիրակն իր դիտողությունները կներկայացնի լսումների ժամանակ:

5.Դիմողը, Հանձնաժողովը և Կառավարությունը մի շարք փաստաթղթեր են ներկայացրել 1991թ. հոկտեմբերի 13-ից 1992թ. հունվարի 21-ն ընկած ժամանակահատվածում, ներառյալ՝ 50-րդ հոդվածի հիման վրա դիմողի գանգատի հետագա մանրամասները:

6.Նախագահի կարգադրությամբ դռնբաց նիստը տեղի է ունեցել Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 1992թ. հունվարի 22-ին: Մինչ այդ Դատարանն անց էր կացրել նախապատրաստական նիստ:

Դատարանում կողմերին ներկայացնում էին՝

ա) Կառավարությունը,
պրն Թեորսթեյն Գեյրսոնը,
Արդարադատության նախարարության
գլխավոր քարտուղար

Գերկայացուցիչ,

պրն Գանլագուր Քլայսենը,
Իսլանդիայի կառավարության
գլխավոր
պաշտպան,

սոլիսիտոր

պրն Ամրկոս Սիգրբյորնսոնը,
պրոֆեսոր
խորհրդատու.

բ) Հանձնաժողովը՝
պրն
պատվիրակ.

Հ.

Դանելիուսը

գ) դիմողին և նրա փաստաբանին՝
պրն Թոմաս Գանարսոնը,
Գերագույն դատարանի իրավաբան:

Դատարանը լսել է Կառավարության կողմից՝ պրն Թեորսթեյն Գեյրսոնի և պրն Գանլագուր Քլայսենի, Հանձնաժողովի կողմից՝ պրն Դանելիուսի և Թյորգեր Թյորգերսոնի ու Թոմաս Գանարսոնի ելույթները:

ՓԱՍՏԵՐԸ

1. Գործի հանգամանքները

Ա. Տվյալներ

7. Պրն Թյորգեր Թյորգերսոնը Իսլանդիայի քաղաքացի է: Նա գրող է և բնակվում է Ռեյկյավիկում, Իսլանդիայում:

8. 1979թ. մինչև 1983թ. Իսլանդիայում տեղի են ունեցել ոստիկանության կողմից բռնության գործադրման մի շարք դեպքեր, որոնցից տասը միջադեպի մասին հայտնվել է ոստիկանություն: Ոստիկանության գործադրած բռնությունների մասին վերջին բողոքը տրվել է 1983թ. աշնանը՝ լրագրող պրն Սկաֆթի Ջոնսոնի կողմից. այս բողոքի հիման վրա քրեական հետապնդում է հարուցվել Ռեյկյավիկի ոստիկանության երեք աշխատակիցների նկատմամբ, որոնցից երկուսի նկատմամբ գործը կարճվել է, իսկ երրորդը դատապարտվել է: Վերջինիս գործն ակտիվ քննարկման առարկա է դարձել մամուլում, և ծավալվել են լուրջ քննարկումներ հասարակության և ոստիկանության հարաբերությունների շուրջ: Սա ստիպել է դիմողին ոստիկանական բռնությունների մասին երկու հոդված տպագրել «Մորգանբլադիդ» օրաթերթում՝ համապատասխանաբար 1983թ. դեկտեմբերի 7-ին և 20-ին:

9. Առաջին հոդվածի բովանդակությունը հետևյալն է (թարգմանություն).

« ԹՈՒՅԼ ՏՎԵՔ ԱՅԺՄ ՔՆՆԱՐԿԵԼ.

Բաց նամակ արդարադատության նախարար Ջոն Յելզասոնին.

Արդարադատության մեծարգո նախարար,

1. Վերջին ժամանակներս մամուլում սկսեց արծարծվել մի քանի տարի շարունակ ինձ անհանգստացնող մի հիմնախնդիր: Ձեզ հայտնի առաջադեմ կուսակցության լրագրի՝ «Թիմինի» (ժամանակը) լրագրողներից մեկի հետ տեղի է ունեցել ցավալի միջադեպ և Ռեյկյավիկի գիշերային կյանքի ջունգլիներից վերադարձել է վնասվածքներով: Հաճախ գիշերային կյանքի ջունգլիների և նման այլ անհյուրընկալ վայրերի վտանգը կարող է մեզ օգնել պատկերացում կազմելու այն դժվարությունների մասին, որոնք այնպիսի միսիոներներ, ինչպիսիք են Ստանլին և Լիվինգսթոնը, ստիպված են դիմակայելու, նույնիսկ եթե նրանք ավելի շուտ քարոզում էին Աստծո արքայությունը, քան համատեղ ուտոպիա:

2. Այս անգամ դժբախտությունը բաժին է հասել քաղաքական միսիոներներից մեկին՝ լրագրող Սկաֆթին, քաղաքի գիշերային ջունգլիներում: Նրա դիմային վնասվածքների լուսանկարները՝ զետեղված լրագրի չորս սյունակներում, անշուշտ, ցնցեցին մեզ:

3. Մենք չենք ցանկանում ընդունել, որ մեր ոստիկաններն այս կերպ վնասել են լրագրողի դեմքը: Ըստ այդ լրագրողի պատմածի՝ նա պարզապես փնտրում էր իր վերարկուն, երբ համազգեստով գազանները վերոհիշյալ ջունգլիներում հարձակվեցին նրա վրա:

4. Իմ կարծիքով, Սկաֆթի գործը չնչին կարևորություն ունի: Սակայն, քանի որ այդ դեպքը մեծ ուշադրության է արժանացել և ակտիվ քննարկման առարկա է դարձել, ես կցանկանայի առիթն օգտագործել նշելու համար, որ իրական հիմնախնդիրն ավելի լուրջ է և շատ ավելի անհանգստացնող:

5. Սկաֆթի գործը, որը մեր ուշադրությանն է արժանացրել մամուլը, սառցաբեկորի միայն վերին հատվածն է: Դրանից ներքև, լուծյալ մուծովում, թաքնված է ինն անգամ ավելի մեծ հիմնախնդիր:

6. Հիմնախնդրի այդ հատվածն էլ ուզում են ներկայացնել ձեր ուշադրությանը, քանի որ դուք արդարադատության նախարարն եք և վերադաս եք համազգեստով վայրի գազանների նկատմամբ, որոնք լռելյայն կամ ոչ լռելյայն, վխտում են մեր քաղաքի գիշերային կյանքում:

7. Ես, անշուշտ, չեմ անտեսում այն ցավն ու դժվարությունները, որոնք այս երիտասարդն ստիպված է եղել կրել: Այնուամենայնիվ, Սկաֆթին ապաքինվում է: Նրա դեմքի կապտուկների գույնը փոխվում է, և ժամանակի ընթացքում դրանք կվերանան: Նա կվերադառնա աշխատանքի (ժամանակը), և նրան պատահած դեպքը կանհետանա այն առօրյա սկանդալների բովում, որոնք կկուտակվեն ինչպես ուժեղ փոթորկից հետո:

Ուստի, մենք այս դեպքը պետք է օգտագործենք որպես առիթ հիմնախնդիրն ամբողջությամբ քննարկելու համար:

8. Մի քանի տարի առաջ ես մի քանի շաբաթ անց եմ կացրել հիվանդանոցում: Նույն հիվանդանոցում բուժվում էր խոստումնալից և գրավիչ մի երիտասարդ, որը, սակայն, ընդարմացած էր և ի վիճակի չէր շարժելու մարմնի որևէ մաս, բացի աչքերից: Նա կարողանում էր կարդալ հատուկ սարքի միջոցով և օգնող ձեռքի միջոցով թերթում էր էջերը:

Ինձ ասացին, որ նրա վերականգնման հնարավորությունները նվազագույն են:

9. Նրա հիվանդասենյակի հիվանդներն ինձ պատմեցին, որ նրան այդ վնասվածքները պատճառել են ռեստորանում՝ մի խաբեբա և ինչ-որ ոստիկաններ: Սկզբում ես չկարողացա հավատալ դրան, ուստի խնդրեցի հիվանդանոցի անձնակազմից այդ մասին ինձ տեղեկություններ տալ. այո՛,

նրանք ճիշտ էին. այդ երիտասարդը Ռեյկյավիկի գիշերային հսկիչ ոստիկանների զոհն էր:

10. Այս ընդարմացած երիտասարդի պատկերն ինձ ուղեկցում էր նաև հիվանդանոցից դուրս, և ես չէի կարողանում այդ մասին խոսել: Հետո ես պարզեցի, որ շատ-շատերը գիտեն տարբեր պատմություններ այն անձանց մասին, ովքեր ավելի դաժան դիպվածներ են ունեցել՝ կապված համազգեստով գազանների հետ: Ոստիկանների և խաբեբաների կիրառած ճնշումների հետևանքով մի շարք անձինք հասցվում էին նորածին երեխայի մանկամտության: Նման պատմություններն այնքան շատ էին և ըստ էության այնքան նույնատիպ, որ այլևս չէր կարելի կասկածել, որ դրանք իրականությանը չեն համապատասխանում: Այս պատմությունների հետ կապված կարևոր հանգամանքներից մեկն այն էր, որ անհմաստ էր բողոքել ընդդեմ ոստիկանների գործողությունների: Հետաքննություններն իրականացվում էին ոստիկանության մեկ այլ բաժնի կողմից, և հետաքննությունն իրականացնող էլիտար խումբն իր պարտքն էր համարում ոստիկաններին ազատել բոլոր տեսակի մեղադրանքներից:

11. Ոստիկանական բռնությունների զոհերը մնում են մոռացված՝ հույս չունենալով, որ իրենց գործերը երբևէ լուրջ կքննվեն:

12. Այժմ սա կարող է լինել այդ հազվադեպ առիթներից մեկը: Դա է պատճառն իմ այս նամակի:

13. Ես նվազագույն կասկած ունեմ, որ առկա է ինչ-որ էական սխալ այն համակարգում, ուր իրենց ծառայությունը կատարող անձինք չեն ըմբռնում արդարադատության ողջ նշանակությունը և սխալ են ըմբռնում իրենց պարտականությունները՝ թույլ տալով դաժան և վայրագ մարդկանց կատարել վայրագություններ՝ անկախ նրանից, թե ով է զոհը: Ըստ իս, Ռեյկյավիկի ոստիկանության պետը համառում է՝ մերժելով աշխատանքից հեռացնել մեղադրվող ոստիկաններին, քանի դեռ հետաքննվում է «Ջոնսոնի գործը»: Ավելին, թվում է, թե նա փոքր-ինչ կորցրել է իր ինքնավստահությունը, նույնիսկ, չնայած որ նա Ձեր կողմնակիցներից է այս գործում: Բայց դեռ կտեսնենք:

14. Նույնիսկ եթե պրն Ջոնսոնը շահի իր գործը, սա կլինի բացառություն, ոչինչ չի փոխվի: Մյուս զոհերը նախկինի նման կշարունակեն մնալ լռության մեջ:

15. Ըստ իս, իրական հիմնախնդիրն այն համակարգի մեջ է, որտեղ ոստիկանները քննության են առնում մյուս ոստիկանների՝ մասնագիտական ճիշտ վարքագծի խախտումները: Իմ այս կարծիքը կիսում են նաև այլ իրավասու անձինք, որոնք, սակայն, ակնհայտորեն խուսափում են իրենց կարծիքը հայտնելուց, քանի որ վախենում են ճնշումներից և բռնություններից:

Հիմնախնդրի լրջությունը դրանում է:

16. Ձեզ նախորդած՝ արդարադատության երկու նախարարները ևս ինձնից նամակներ են ստացել այս հիմնախնդրի վերաբերյալ: Նրանցից ոչ մեկը չի բարեհաճել պատասխանել:

17. Վերջերս թերթում տեսա Ձեր լուսանկարը և ինձ վրա մեծ տպավորություն գործեց Ձեր դեմքի արտահայտությունը. Ձեր դեմքին դրոշմված էին արդարամտությունն ու վստահությունը: Սա, անշուշտ, դեմքի արտահայտության տեսակ է, որը կարող է ցանկացած ժամանակ ներծծվել Ձեր բնավորության մեջ, նույնիսկ եթե դեմքի նման արտահայտությունը միայն նախատեսված էր լուսանկարչի համար:

Ուստի և դիմում եմ Ձեզ:

Իմ առաջարկը նույնն է, ինչ նախկինում.

18. Դադարեցրեք ոստիկանական բռնությունների վերաբերյալ այս գործերը՝ մակերեսային, անօգուտ ավտոմատ լվացքի մեքենան նետելուց: Քանի դեռ ոստիկանները հնարավորություն ունեն մաքրագարդել մեկը մյուսին, Դուք երբեք չեք կարողանա նրանց պատասխանատվության ենթարկել դեպքերի համար, երբ նրանք թույլ են տալիս ազդեցության ներքո կորցնում են հսկողությունը իրենց համբերության նկատմամբ, նույնիսկ այն դեպքում, երբ կա այնպիսի անհրաժեշտ միջոցների կիրառման հնարավորություն, ինչպիսիք են բնավորությունը բացահայտող և IQ տեստերը, որոնք ոստիկանները պետք է հանձնեն մինչև մարդկանց նկատմամբ իրենց ճակատագրական ոստիկանական միջոցները կիրառելը, որոնք բոլորն անհրաժեշտ են իրենց վերապահված իշխանությանն արժանի իրավասու ոստիկանական ուժեր ունենալու համար:

Բայց ինչպե՞ս կարող ենք ազատվել այս հին համակարգից:

19. Դուք պետք է ստեղծեք վստահելի անձանցից կազմված կոմիտե, որը քննության կառնի աստիճանաբար հասարակական կարծիք դարձած այն լուրերը, որ Ռեյկյավիկի ոստիկանությունում բռնություններն ավելի ու ավելի մեծ չափերի են հասնում և լռության են մատնվում անբնական կերպով: Նման կոմիտեն կարող է հրավիրել ոստիկանական բռնությունների զոհերին, որպեսզի փաստերը վերջնական ճշտում ստանան: Հուսանք, որ այդ կոմիտեն կբացահայտի, որ ոստիկանների փոքրաթիվ մասն է պատասխանատու: Նման ոստիկաններին խորհուրդ կտրվի այլ աշխատանք փնտրել:

20. Ես այն զգացողությունն ունեմ, որ մեր ոստիկանության հիմնախնդիրը կարող է համեմատվել, այսպես կոչված՝ Երիտասարդության հիմնախնդրի հետ՝ այն իմաստով, որ համեմատաբար քիչ թվով անձինք են պատասխանատու իրենց մասին այս բացասական հասարակական կարծիքի համար: Դրանից, այդ անհատները չէին կարող բնորոշ համարվել ոչ որևէ խմբի համար, ոչ էլ՝ առավել խելացիների համար:

21. Այս քաղաքում ես տեսել եմ ոստիկանների, որոնք շատ լավ գործեր են արել, և միաժամանակ հանդիպել եմ շատ օրինակելի երիտասարդների: Մենք չենք կարող լինել առանց նրանց: Բայց ես զգում եմ, որ պարտական եմ հիվանդանոցում տեսած երիտասարդին՝ համարձակություն ձեռք բերելու և այս առաջարկությամբ հանդես գալու համար: Թույլ տվեք փորձել վերացնելու այս խառնաշփոթը՝ այնպես, որ բոլորը, ովքեր պատրաստ են իրենց կյանքը վտանգելով՝ մտնել Ռեյկյավիկի գիշերային կյանքի արկածների մեջ, ապագայում զոհե նվազագույն չափով համոզված լինեն, որ քաղաքի

գիշերային կյանքի վտանգները չեն կարող գալ համազգեստով ոստիկաններից:

Այնտեղի վայրի գազաններն արդեն բավական են:

22. Դատարանում երբեմն ներկայացվում է այլընտրանքային պահանջ,

երբ հիմնական պահանջը չի ընդունվում: Ջոն Յելգասո՛ն, եթե Դուք չկարողանաք ապահովել այս չեզոք հետաքննությունը, ես կոչ կանեմ լրագրողներին (օրինակ՝ Սկաֆթիին) սկսել հետաքննություն և արդյունքները հրատարակել մի գրքում, որը կդառնա բեստսելեր: Ես միշտ պատրաստ եմ մասնակցելու դրան:

Ամենայն հարգանքով և լավագույն մաղթանքներով,

անկեղծորեն
Թյորգեր Թյորգերսոն»:

10. Քաղվածքներ երկրորդ հոդվածից.

« ԶԱՐՎԱԾԻՐ, ՔԱՆԻ ԴԵՌ ԾԱՆԾԸ ՆՍՏԱԾ Է ՔԹԻՍ...

1. Դեկտեմբերի 13-ին, երեկոյան, հեռուստատեսային ծրագրով Թյորգեր Թյորգերսոնի հայտարարությունը ոստիկան Էյնար Բյարնասոնի վարքագծի վերաբերյալ:

....

2. Նախորդ երեքշաբթի, դեկտեմբերի 13-ին, հեռուստատեսությամբ հաղորդում հեռարձակվեց ոստիկանության հիմնախնդրի վերաբերյալ: Մասնակիցների մեջ էին երկու ինտելեկտուալ ոստիկաններ, որոնք զուրկ էին զսպվածությունից, ինչպես կարծում են հեռուստադիտողները: Միակ հեռուստադիտողը, որն արդարացնում էր Բյարքիին և Էյնարին, պնդում էր, որ նրանք միայն երկուսն էին, և երրորդը, ցավոք, դուրս էր թողնվել նրանց ճամբարից:

Սա կարող է ճիշտ լինել:

3. Հաղորդման ավարտին Էյնարը, որը եղել էր Ռեյկյավիկի ոստիկանների միության նախագահը, կազմակերպեց մի զարմանալի տեսարան. շշուկով խորհրդակցելով Բյարքիի հետ՝ նա սկսեց կարդալ ինչ-որ տպագիր փաստաթուղթ, որը բովանդակում էր զազրախտություններ իմ մասին. փաստաթուղթն ստորագրված էր խաբեբա և անվստահելի մի անձի կողմից (համաձայն այս փաստաթղթի, որը ոստիկանությունն ինչ-որ ձևով ստորագրել էր տվել մի անձի, որը դրա հետ որևէ կապ չուներ):

4. Էյնարը կարող էր հեշտությամբ իր հայտարարությունը, առանց օրենքը խախտելու, հեռարձակել ռադիոյով, և այդպիսով վտանգել և՛ իր պատիվը, և՛ աշխատանքը: Մի շարք հեռուստադիտողներ ապշահար էին նրա վարքագծից:

Չարմանալի ոչինչ չկա:

5. Այս ձեռնարկումը դժվար թե հնարավոր լիներ բացատրել պարզապես վերահսկողության բացակայությամբ: Ուստի, ստիպված եմ մեկ այլ հոդված հավելել այն ամենին, ինչ մեկ շաբաթ առաջ ներկայացրել եմ որպես հիմնախնդրի վերաբերյալ իմ վերջին խոսք (սա գրված է դեկտեմբերի 15-ին, հինգշաբթի օրը և լրագրին կհանձնվի դեկտեմբերի 16-ին, ուրբաթ օրը):

Ես ստիպված եմ մատնանշել իմ փորձը վերջին շաբաթվա ընթացքում:

6. Նախորդ չորեքշաբթի օրը, դեկտեմբերի 7-ին, «Մորզանբլադիդը» տպագրեց իմ նամակը՝ ուղղված Իսլանդիայի դատաիրավական համակարգի բարձրագույն պաշտոնյային: Իմ խնդրանքն էր անհապաղ անցկացնել ոստիկանական հիմնախնդրի չեզոք հետաքննություն՝ թույլ չտալով հիմնախնդրի նկատմամբ հսկողության իրականացումը ոստիկանության իսկ կողմից: Բնականաբար, ես չէի կարող սպասել, որ իմ նամակի տեքստը հայտնվի տեղական ոստիկանական բաժանմունքներում:

7. Որոշակի թյուրընկալումները մշտապես անխուսափելի են: Այս հիմնախնդրի շուրջ ձևավորվել են սխալ պատկերացումներ: Գրողի պարտականությունների վերաբերյալ իմ ընկալումն այն է, որ նա պետք է հանդես գա որպես հասարակության տվյալ հատվածի խիղճ, բայց մեր ոստիկանական պաշտոնյաները միանգամայն այլ կարծիքի են, ինչը և կարելի էր սպասել:

Դրանում վիրավորական ոչինչ չկա:

8. Այն առավոտյան, երբ նախարար Ջոն Յելզաստնին ուղղված նամակը տպագրվեց լրագրում, զարմանալիորեն մեծաթիվ անձինք զանգահարեցին ինձ: Նրանց մեջ էր Գուդմանդուր Յերմանսոնը, որը ներկայացավ որպես Ռեյկյավիկի ոստիկանապետ: Նա ցանկանում էր իմանալ, թե իմ հոդվածը որ դեպքի մասին էր: Ես պատասխանեցի, որ իմ հոդվածը վերաբերել է ընդհանուր իրավիճակին և ոչ առանձին դեպքի: Այդ հիմնախնդրի հետ կապված դեպքերը մի քանի հարյուրյակ էին: Գուդմանդուրը ցանկանում էր իմանալ հիվանդանոցում բուժվող այն երիտասարդի անունը, ում մասին ես հիշատակել էի հոդվածում: Ես պատասխանեցի, որ երբևէ չեմ լսել այդ երիտասարդի անունը, և դա ճշմարտությունն էր: Ես հարցրի Գուդմանդուրին՝ արդյո՞ք ոստիկանությունն ուսումնասիրում է հարցը: Նրա պատասխանը դրական էր: Ես նշեցի, որ ոստիկանության անօրինական գործողությունների կապակցությամբ հետաքննությունը ոստիկանությանը վստահելը շատ վտանգավոր քայլ է: Միաժամանակ, ես հրաժարվեցի հեռախոսով ավելին ասելուց, բացի նրանից, որ հայտնեցի հիվանդանոցում իմ գտնվելու ժամանակահատվածը:

9. Մինչև կիրակի օրը բոլոր լրագրերը ողողված էին ոստիկանների աղաղակող հայտարարություններով: «Մորզանբլադիդի» կիրակնօրյա համարը տպագրեց մի ոստիկանի՝ Յոհանես Ջոնսոնի հոդվածը, որը հղում էր կատարում դեկտեմբերի 9-ի, ուրբաթ օրվա լուրերին, ինչը նշնակում էր, որ նրա հոդվածը խմբագրություն էր հանձնվել շաբաթ օրը: Սա ինձ տարօրինակ թվաց, քանի որ ինձ հայտնի է, որ «Մորզանբլադիդում» հոդված տպագրելու համար դրա տպագրման հանձնելու օրվանից պետք է սպասել 4-6 օր: Սա վերաբերում էր այն դեպքերին, երբ հոդվածը տպագրության է հանձնվում մեզ նման սովորական քաղաքացիների կողմից: Այս հոդվածում ոստիկանը կրկնում էր «ոստիկանական ճշմարտությունը», որ Թյորգերսոնի «մատնանշած» գործը պետք է գտնել «Մորզանբլադիդի» ուրբաթ օրվա համարի 13-րդ էջում...

10. Դրանից հետո ինչ-որ բան է կատարվել, և այժմ ես պետք է խնդրեմ Յոլլից կատարել իր խոստումը և տպագրել իմ հայտարարությունը: Նույնիսկ չնայած նրան, որ անցած երեքշաբթի հեռուստահաղորդման վերջում էյնարի հնչեցրած գրպարտություններն այնքան անիրական էին, որ մոռացվեցին և չվնասեցին

ինձ: Ես պետք է նշեմ, թե նրա վարքագիծը որքան բնորոշ էր ոստիկանության համար:

11. Ի՞նչն է ընկած, այսպես կոչված՝ ոստիկանական հիմնախնդրի հիմքում: Լավ. շատերը կարծում են, որ մեր ոստիկանները հարձակում են գործել մեծ թվով քաղաքացիների վրա՝ մեղավոր, թե՛ անմեղ:

12. Վերջին ժամանակներս մամուլում հայտնված՝ ոստիկանության արձագանքները ցույց տվեցին, որ դրանք խիստ նման էին Ջոն Թորոքսենի նովելներին. անձը, ով բամբասում և լուրեր է տարածում, հաճախ ինքն է հայտնվում դրանց մեջ: Ամեն դեպքում, դա նրանց ընտրած գիծն է:

13. Այս սկզբունքը բավականին հեռու է պաթետիկ լինելուց, որ ողջ ոստիկանությունը հետևեր դրան, եթե մենք իսկապես ցանկանում ենք, որ մարդիկ գնահատեն նրանց ծառայությունները:

14. Սկսած երեքշաբթի օրվանից, ես բազմաթիվ հեռախոսազանգեր եմ ստացել. զանգահարողները կարծիք են հայտնում, որ ոստիկանների հեռուստաշոուն ազգային առանձնահատկությունների՝ մեր երեխաների համար կործանարար ցուցադրում էր:

15. - Նրանք պետք է համազգեստով լինեին, - ասաց ինչ-որ մեկը: - Նրանց վարքագիծը համապատասխանում էր մեր ոստիկանության վերաբերյալ ձևավորված հասարակական կարծիքին. ահաբեկում, խաբեություն, անօրինական գործողություններ, սնտիապաշտություն, անզգուշություն և անընդունակություն:

16. Այս հողվածի վերանագիրը վերցված է ժողովրդական հեքիաթից. յուրաքանչյուրը պետք է իմանա ճանճ սատկացնող զույգի մասին: Ես այսպիսի զուգահեռ անցկացրի, քանի որ հեռուստահաղորդման ընթացքում այն տպավորությունն էր, որ ոստիկանը կարծես պայքարում էր իր գլխարկի վրա նստած մեղվի դեմ: Եթե մեր արդարադատության նախարարը ժամանակ չի ունեցել դիտելու հեռուստահաղորդումը, ես կառաջարկեի վերցնել հեռուստահաղորդման տեսագրությունը, այսինքն, եթե նա ցանկանում է տեսնել այն ամենի գրեթե կատարյալ տեսապատկերը, որին հասարակական կարծիքը վերաբերում է որպես ոստիկանական հիմնախնդիր:

17. Հաղորդումը պետք է մեզ համար լիներ հիմնախնդրի անաչառ քննության անհրաժեշտության օրինակ՝ ոստիկանների ինքնագնահատմանը և մանկամիտ հպարտությանը դիպչող հարցերի կապակցությամբ հետաքննություն իրականացնելիս ոստիկանների կողմից շարունակաբար իրենք իրենց վնասելը կանխելու համար:

18. Եկեք դադարեցնենք այս կռիվները և քննարկենք արդարադատության նախարարին ուղղված իմ նամակում ներկայացված առաջարկները: Մենք կարող ենք նույնիսկ քննարկել իմ մի սրամիտ ընկերոջ առաջարկ:

19. –Թյորգե՛ր, - ասաց նա, - լավ միտք է, չէ՞, ոստիկանական այս կռիվների ուսումնասիրությունը մի մանկական լավ հոգեբանի վստահելը: Հիմնախնդիրն այնքան էլ բարդ չէ:

Շնորհակալություն խմբագրությանը.

«Թյորգեր Թյորգերսոն»:

11. Այս հողվածներին ի պատասխան՝ հետևում է արդարադատության նախարարի 1984թ. հունվարի 9-ի նամակը: Նամակում ասվում էր, որ հողվածներում արծարծված հիմնախնդիրները քննարկվում են տարբեր մակարդակներում, հարցը Պառլամենտի օրակարգում է, և արդարադատության նախարարը պետք է մոտ ապագայում Պառլամենտին

զեկուցի ուսումնասիրությունների և այս հարցի կապակցությամբ կատարված առաջարկությունների մասին:

Բ. Հետաքննությունը և զրպարտության կապակցությամբ գործի վարույթը

12. Ռեյկյավիկի ոստիկանների միությունը 1983թ. դեկտեմբերի 27-ի նամակով դատախազին խնդրել է հետաքննություն անցկացնել վերոհիշյալ հայտարարությունների կապակցությամբ: Այնուհետև, 1984թ. մայիսի 21-ին նա գործն ուղարկել է Պետական քրեական հետաքննչական ոստիկանություն («SCIP»)՝ հետաքննելու համար, թե արդյո՞ք այդ հրատարակումները հանդիսանում են զրպարտություն 1940թ. Քրեական օրենսգրքի 108 հոդվածի իմաստով (թիվ 19/1940օրենք - «Քրեական օրենսգիրք»): Հունիսի 18-ին SCIP-ը հարցաքննել է դիմողին: Հարցաքննությանը ներկա է եղել նրա փաստաբանը:

13. Արդյունքում 1985թ. օգոստոսի 13-ին դատախազը մեղադրական եզրակացություն է կազմել՝ համաձայն Քրեական օրենսգրքի 108 հոդվածի՝ դիմողին մեղադրելով Ռեյկյավիկի ոստիկանության անդամներին (առանց կոնկրետ անուններ նշելու) զրպարտելու մեջ:

14. Ջրպարտչական էին համարվում առաջին հոդվածի հետևյալ հատվածները.

«համազգեստով գազաններ» (վերը՝ 9(3) կետ), «համազգեստով այդ վայրի գազանների» (վերևում՝9(3)կետ),

«Նրա հիվանդասենյակի հիվանդներն ինձ պատմեցին, որ նրան այդ վնասվածքները պատճառել են ռեստորանում՝ մի խաբեբա և ինչ-որ ոստիկաններ: Սկզբում, ես չկարողացա հավատալ դրան, ուստի խնդրեցի հիվանդանոցի անձնակազմից այդ մասին ինձ տեղեկություններ տալ. այո՛, նրանք ճիշտ էին. այդ երիտասարդը Ռեյկյավիկի գիշերային հսկիչ ոստիկանների զոհն էր:» (վերևում՝9(9) կետ),

«Հետո ես պարզեցի, որ շատ -շատերը գիտեն տարբեր պատմություններ այն անձանց մասին, ովքեր ավելի դաժան դիպվածներ են ունեցել՝ կապված համազգեստով գազանների հետ: Ոստիկանների և խաբեբաների կիրառած ճնշումների հետևանքով մի շարք անձինք հասցվում էին նորածին երեխայի մանկամտության: Նման պատմություններն այնքան շատ էին և ըստ էության այնքան նույնատիպ, որ այլևս չէր կարելի կասկածել, որ դրանք իրականությանը չեն համապատասխանում:» (վերը՝ 9(10) կետ),

«ոստիկանական բռնությունների զոհերը» (վերը՝ 9(11)կետ),

«թույլ տալով դաժան և վայրագ անձանց կատարել վայրագություններ» (վերը՝ 9(13) կետ):

15. Դատախազը գտնում էր, որ զրպարտչական հայտարարություններ էր բովանդակում նաև երկրորդ հոդվածը.

«Նրանց վարքագիծը համապատասխանում էր մեր ոստիկանության վերաբերյալ ձևավորված հասարակական կարծիքին. ահաբեկում, խաբեություն, անօրինական գործողություններ, սնոտիապաշտություն, անզուլություն և անընդունակություն:» (վերը՝ 10(15) կետ):

16. 1985թ. սեպտեմբերի 9-ին մեղադրական եզրակացությունը հանձնվել է դիմողին, և վերջինս ծանուցվել է հաջորդ օրը ներկայանալ Ռեյկյավիկի քրեական դատարանի պալատի նիստին. պալատի միակ անդամը Պետր Գուդգեյրսոնն էր: Դիմողի խնդրանքով նիստը հետաձգվել է մինչև սեպտեմբերի 17-ը: Այդ օրվա նիստին դիմողը ներկայացել էր իր պաշտպանի՝ Թոմաս Գանարսոնի հետ (Գերագույն դատարանի իրավաբան), դատախազը նիստին չի մասնակցել: Նիստի ընթացքը հետևյալն էր.

ա. 1974թ. Քրեական դատավարության օրենսգրքի (թիվ 74/1974 օրենք) 77 հոդվածի համաձայն՝ դատարանը հայտարարել է, որ մեղադրյալը պետք է հարցաքննվի, քանի որ մեղադրվում է հանցագործություն կատարելու մեջ:

բ. Թոմաս Գանարսոնը նշանակվել է դիմողի պաշտպան: Գործին առնչվող բոլոր փաստաթղթերը հանձնվել են նրան:

գ. դիմողին ուղղված՝ դատավորի այն հարցին, թե արդյո՞ք ինքը գրել է խնդրո առարկա երկու հոդվածները, հետևել է դիմողի հետևյալ պատասխանը. «Ես գրել եմ այդ հոդվածները, սակայն մեղադրական եզրակացության մեջ այդ հոդվածներից մեջբերված հատվածները, թեև ճիշտ են, այնուամենայնիվ, կտրված են համատեքստից:

դ. դատավորը դիմողին է ներկայացրել 1984թ. հունիսի 18-ին SCIP-ին նրա ներկայացրած հայտարարությունների արձանագրությունը և SCIP-ին ուղղված՝ հունիսի 19-ի նրա նամակը: Դիմողը հաստատել է արձանագրության ճշտությունը և այն հանգամանքը, որ նամակը գրել է ինքը:

ե. ի պատասխան դատավորի այն հարցին, թե ինքն արդյո՞ք կարող է ապացուցել իր հոդվածների համապատասխան հատվածների հավաստիությունը, դիմողը նշել է, որ մեղադրական եզրակացության մեջ առկա համատեքստում ինքը ոչ ի վիճակի է, և ոչ էլ պարտավոր է ապացուցել դրանց հավաստիությունը. այդ հատվածներն իր գրական ստեղծագործությունները չեն, այլ մեղադրողի ստեղծագործություններն են:

զ. դիմողը ժամանակ է խնդրել գործում առկա փաստաթղթերին ծանոթանալու համար: Հաջորդ նիստը նշանակվել է 1985թ. սեպտեմբերի 24-ին:

17. Այդ օրը դիմողը և իր պաշտպանը ներկայացել են նիստին, որը կրկին տեղի է ունեցել դատախազի բացակայությամբ: Պաշտպանը բացարկ է հայտնել դատավոր Պետր Գուդգեյրսոնին այն հիմքով, որ նա, բացի դատավորի գործառույթները կատարելուց, ներկայացնում էր նաև մեղադրանքի կողմը, քանի որ և՛ նախորդ, և՛ տվյալ նիստն ընթանում էին դատախազի բացակայությամբ:

18. 1985թ. սեպտեմբերի 25-ին դատավորը որոշում է ընդունել. «Նշված հանգամանքը, համաձայն Քրեական դատավարության օրենսգրքի 130 հոդվածի՝ բացարկի հիմք չէ: Դատավորի դեմ ներկայացված՝ [դիմողի] բացարկը չի հիմնավորվում որևէ ընդունելի պատճառաբանությամբ և ամբողջովին անհիմն է: Դատավորը ոչ պարտավոր է և ոչ էլ կարող է ընդունել բացարկը»:

19. 1985թ. սեպտեմբերի 26-ին, Քրեական դատավարության օրենսգրքի 171 հոդվածի համաձայն՝ մեղադրանքի կողմը մերժել է դիմողի խնդրանքը՝ այդ որոշումը Գերագույն դատարան բողոքարկելու թույլտվության վերաբերյալ: Դրանից հետո նա արդարադատության նախարարին խնդրել է նշանակել ad hoc դատախազ՝ այդ թույլտվության հարցը քննարկելու համար, բայց նրա խնդրանքը մերժվել է հոկտեմբերի 18-ին:

20. 1985թ. հոկտեմբերի 9-ից մինչև 1986թ. ապրիլի 28-ը քրեական դատարանը գումարել է ևս 6 նիստ, որոնց ներկա են եղել դիմողը և նրա պաշտպանը: Ներկայացվել են փաստաթղթեր, բանավոր հայտարարություններ, հարցաքննվել են վկաներ: Դատախազը ներկա է եղել բոլոր նիստերին, բացի 1986թ. փետրվարի 17-ի նիստից, երբ դատարանում ցուցադրվել է հեռուստահաղորդման տեսագրությունը:

21. 1985թ. հոկտեմբերի 25-ի նիստին դատավոր Պետր Գուդգեյրսոնը

դիմողին ցույց է տվել լուսանկարներ և հարցրել՝ արդյո՞ք, դրանք

հիվանդանոցում բուժվող այն երիտասարդի լուսանկարներն են, ում մասին

ինքը նշել է իր առաջին հոդվածում (տես, կետ 9 (8)): Դիմողի պատասխանը հետևյալն էր. «... փորձառու չափահաս անձի համար զարմանալի է նման հարց լսել մեկ այլ փորձառու չափահաս անձից: Ես ամեն օր տեսնում և ուսումնասիրում եմ 100-200 անձի: Այդ անձանց ամբողջ թվաքանակը կազմում է Իսլանդիայի գրեթե 7 տարվա բնակչությունը: Ուստի, այն անձին, ում տեսել եմ 50 անգամից պակաս, չի տպավորվում իմ հիշողության մեջ, եթե տվյալ անձին մտապահելու համար ինչ-որ հատուկ պատճառ չի եղել: Հետևաբար, անհետք է և մարդկային մտքի բնույթին դեմ այն հարցը, թե արդյո՞ք ինքը ճանաչում է այն անձին, որին ենթադրաբար տեսել է 7 տարի առաջ: Ես կարող եմ, այնուամենայնիվ, ասել, որ սա այն երիտասարդը չէ, որին մտովի նկատի եմ ունեցել՝ «Թույլ տվեք քննարկել» վերտառությամբ հոդվածը գրելիս:»

22. 1986թ. ապրիլի 28-ի նիստի ընթացքում կողմերը համաձայնել են, որ դատարանի կողմից հետագա քննություն չի պահանջվում: Հետևաբար, խորհուրդ է տրվել մինչև 1986թ. հունիսի 3-ը դիմողի պաշտպանությունը ներկայացնել գրավոր ընթացակարգով. դատախազը հայտարարել է, որ ինքը չունի լրացուցիչ դիտողություններ:

23. Ի պաշտպանություն իրեն, դիմողը 1986թ. հունիսի 3-ին պահանջ է ներկայացրել (տես վերը՝ 17-19 կետերը), որ գործը պետք է կարճվի կամ մեղադրյալը պետք է արդարացվի՝ հաշվի առնելով այն, որ դատախազը բացակայել է մի քանի դատական նիստից: Գործի հանգամանքների կապակցությամբ նա, *inter alia*, պահանջել է. «Անշուշտ, ոստիկանների հարձակումներն ուղղված են հասարակության դեմ՝ ընդհանրապես... Նման փորձը բավականին տպավորիչ և անմոռանալի է, և իրերի բնականոն ընթացքի պայմաններում մի անձը պատմում է մյուսին: Նկարագրությունների ընթացքում այդ նկարագրությունները հաճախ ուռճացվում և չափազանցվում են: Առանձին դեպքերի թվի ավելացմանը զուգընթաց ձևավորվում է հասարակական կարծիք, որը, բնականաբար, ավելի խիստ ու սուր է, քան իրականում կա: Ես օգտագործել եմ այս հասարակական կարծիքը՝ որպես «Թույլ տվեք քննարկել» վերտառությամբ իմ հոդվածի հիմք: Հասարակական կարծիքը ինքնին փաստ է, և դրա հիմքերը, ընդհանուր առմամբ, նվազ կարևոր են և ավելի քիչ են քննարկման ենթակա...»

Եթե հասարակական կարծիքը դառնում է խիստ և սուր, վստահությունը վերանում է նույնիսկ այն ոստիկանի նկատմամբ, որը երբեք ճանճ էլ չի սատկացրել: 1983թ. աշնանը վստահության այս կորուստը հասել էր բնակչության համար վտանգավոր չափերի: Ուստի, երբ Սկաֆթիի գործը հայտնվեց ուշադրության կենտրոնում, ես իրազեկ դարձա այդ վտանգին: Եվ իմ ...«Մորզանբլադիդում» 1983թ. դեկտեմբերի 7-ին տպագրված իմ հոդվածն արձագանքն էր այդ վտանգին: Այդ հոդվածը գրելով՝ ես կատարում էի գրողի իմ պատվավոր պարտականությունը, որն ուսումնասիրում է ժողովրդի

տրամադրությունը և իր բացահայտումների արդյունքները հայտնում ի լուր բոլորի՝ առանց ճշմարտությունը թաքցնելու: Սա պարզ է բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են հողվածը կարդալ ամբողջությամբ և մտածում են իրականում հասկանալ գրվածի իմաստը...

Բայց հողվածի հիմնական նպատակը և դրա արդյունքը նախարարին ուղղված խնդրանք էր՝ հետաքննության միջոցով պարզել՝ արդյո՞ք, հասարակական կարծիքը ճիշտ է, թե՛ սխալ: Հողվածը նպատակ ուներ բարձրացնել օրինական և անհետաձգելի մի հարց:

Նույնիսկ չնայած նրան, որ իմ նպատակը հողվածն ամբողջովին օրենքի շրջանակներում գրելն էր, ես չեմ թաքցնի, որ նաև փորձել եմ տեքստը շարադրել այնպես, որ կարողանամ պատասխան կորզել շահագրգիռ կողմերից: Հարցը, անշուշտ, վտանգավոր հասարակական կարծիքի ճշմարտացիության մասին էր: Եթե այն իրականությանը չէր համապատասխանում, ապա կարելի էր ակնկալել ոստիկանական իշխանությունների (որը միայն այս հարցերի վերաբերյալ կարող էր ունենալ բազմակողմանի գիտելիքներ) արձագանքը՝ հասարակությանը հանդարտեցնող, վստահություն ներշնչող և հանգիստ միջոցներով: Ոստիկանների միության խորհուրդը և ոստիկանապետը կարող էին պարզապես խորհուրդ տալ նախարարին՝ առաջին իսկ հնարավորության դեպքում հետաքննություն իրականացնել խնդրո առարկա հարցի կապակցությամբ: Նման արձագանքը մեծապես կհանդարտեցներ հասարակությանը, քանի որ դա կլիներ բարի կամքի արտահայտություն»:

24. 1986թ. հունիսի 16-ի նիստին, որին ներկա էր դիմողը, դատավոր Պետր Գուդգեյրսոնը, որը մերժել էր մի քանի նիստերի դատախազի բացակայության պատճառաբանությամբ իրեն հայտնված բացարկը, դատավճիռ է կայացրել: Գործի ըստ էության լուծման կապակցությամբ դատավորը, *inter alia*, նշել է.

«Համաձայն ներկայացված ապացույցների՝ մեղադրյալը բուժում է ստացել Ռեյկյավիկի քաղաքային հիվանդանոցում 1978թ. հունիսի 19-ից հուլիսի 11-ը: Միաժամանակ թրասթի էլլիդասոն անունով մի հիվանդ էր բուժվում նույն հիվանդանոցում, որը ֆիզիկական վնասվածքների արդյունքում անդամալուծ էր դարձել. Մեղադրյալին ցույց են տվել թրասթի էլլիդասոնի լուսանկարները, որոնք կատարվել էին քաղաքային հիվանդանոցում վնասվածքներն ստանալու հաջորդ օրը: Մեղադրյալը նշել է, որ թրասթի էլլիդասոնն այն անձը չէ, ում ինքը նկարագրել է ... «Մորգանբլադիդում» տպագրված իր հողվածում...

Քննարկվել են օրենքի կիրառման հետ կապված հարցեր, հասարակության և ոստիկանության միջև հարաբերությունները, ինչպես նաև «Սկաֆթի գործը»: Հաղորդման ավարտին էյնար Բյարնասոնը՝ ոստիկանության սերժանտ և Ռեյկյավիկի ոստիկանների միության նախագահը, նշել է, որ ... մեղադրյալի հողվածը կարող է անհիմն լինել, քանի որ ... ինքն ունի այն երիտասարդի հայտարարությունը, որի մասին մեղադրյալը գրել է «Մորգանբլադիդում»: Սերժանտը ընթերցել է [այդ հայտարարությունը]: [Դրանում], *inter alia*, ասվում էր. «Այն, ինչ թյուրգեր թյուրգերսոնն իմ մասին գրել է իր հողվածում, սկզբից մինչև վերջ իրականությանը չի համապատասխանում»: Հարցի քննության արդյունքներով, ըստ [պրն Բյարնասոնի] և ոստիկանության կոնստաբլ Բյարքի էլիասոնի՝ այդ հայտարարությունն արել էր այն անձը, ում մասին մեղադրյալը գրել էր:

Մեղադրյալի պաշտպանի պահանջով պրն Էյնար Բյարնասոնը կանչվել է դատարան՝ վկայություն տալու: Նա հայտնել է, որ հայտարարությունը տվել է անձամբ մի երիտասարդ՝ թրասթի էլլիդասոն անունով, ... որ ինքը ձեռք է բերել տեղեկություններ այն ժամանակահատվածի վերաբերյալ, երբ

մեղադրյալը և Թրասֆի էլլիդասունը հիվանդանոցում էին, և ենթադրվում էր, որ մեղադրյալն իր հողվածում նկատի է ունեցել Թրասֆի էլլիդասունին: Ահա այսպես էին նրանք ձեռք բերել Թրասֆի էլլիդասունի հայտարարությունը: Ավելին, վկան նշել է, որ ըստ իր իրազեկության՝ Ռեյկյավիկի ոչ մի ոստիկան իր պարտականությունները կատարելու ընթացքում երբևէ որևէ մեկի չի պատճառել այնպիսի վնասվածքներ, որոնք նկարագրում է մեղադրյալը 1983թ. դեկտեմբերի 7-ի իր հողվածում: ...

Պաշտպանը ... նշել է, որ երկու հողվածները գրելով՝ մեղադրյալը կատարել է հասարակության առջև ունեցած իր պարտականությունները՝ ժողովրդի ուշադրությունը հրավիրելով ոստիկանության պատճառած վնասների վրա՝ այդ հիմնախնդիրը հրապարակ հանելով և ոստիկանությունից պահանջելով կանխել նմանատիպ դեպքերը: [Միայն սա] քիչ ուշադրություն կգրավեր, եթե չհրապարակվեր մամուլում, և նույնիսկ այդ դեպքում էլ կարող էր աննկատ մնալ: Անհրաժեշտ են նաև խիստ և հատու խոսքեր և ոճական հնարքներ, որոնց քաջատեղյակ են գրողները: Մեղադրյալն իր ապրուստի միջոցը որպես գրող վաստակել է տարիներ շարունակ, և պետական մարմիններն ընդունել են նրա աշխատանքը, *inter alia*, նրան աշխատավարձ վճարելով: Նրա աշխատանքը Սահմանադրության 72 հոդվածով նախատեսված պաշտպանության շրջանակում է, որն արգելում է գրաքննությունը և մամուլի ազատության այլ սահմանափակումները:

Այնուամենայնիվ, նշված սահմանադրական նորմը նախատեսում է նաև, որ անձը պատասխանատու է տպագիր հայտարարությունների համար՝ սկզբունք, որը երբևէ չի վիճարկվել իսլանդական իրավունքում: Գործում են տարբեր օրենսդրական դրույթներ, որոնք պատժելի են համարում հրապարակավ կատարված, օրինակ՝ տպագրված որոշակի հայտարարություններ և մտքեր: Ի հավելումն Քրեական օրենսգրքի 108 հոդվածի, այս կապակցությամբ կարող են մատնանշվել նաև նույն օրենսգրքի 88, 95, 121, 125, 210, 229 և 233 (a)-237 հոդվածները: Մեղադրյալը՝ գրող լինելու փաստով չի կարող հավակնել որևէ արտոնության կամ արտահայտվելու ավելի լայն ազատության, քան այլոք:

Մեղադրյալի հողվածները տպագրվել են նրա անունով, և նա ընդունել է, որ ինքն է դրանց հեղինակը: «Սորգանբլադիդուն» հողվածների տպագրության ժամանակ մեղադրյալը եղել է Իսլանդիայի բնակիչ: «Հրատարակումների իրավունքի մասին» 1956թ. օրենքի համաձայն՝ ... նա այդպիսով կրում է և՛ քրեական պատասխանատվություն, և՛ պատասխանատվություն վնասների համար՝ հաշվի առնելով դրանց բովանդակությունը:

Մեղադրական եզրակացության մեջ տեղ գտած մեղադրանքները հիմնվում էին այն հայտարարությունների վրա, որոնք ուղղված էին Ռեյկյավիկի ոստիկանական ուժերի չորոշակիացված անդամների դեմ:

Չնայած Քրեական օրենսգրքի 108 հոդվածի ձևակերպումը վերաբերում է կոնկրետ ... քաղաքացիական ծառայողների, [այս դրույթը] վերաբերում է նաև քաղաքացիական ծառայողների որոշակիացված խմբի (տես, Գերագույն դատարանի զեկույցներ. վճիռը, LIV հատոր, էջ 57):

«Համազգեստով գազաններ» և «համազգեստով այդ վայրի գազանների» բառերը՝ տպագրված համատեքստում, հանդիսանում են պախարակում և վիրավորանք՝ ուղղված Ռեյկյավիկի ոստիկանական ուժերի չորոշակիացված անդամների դեմ: Այս հայտարարությունները պատժելի են ըստ Քրեական օրենսգրքի 108 հոդվածի:

Մեղադրական եզրակացության մեջ այս հայտարարությունները դիտվում էին որպես զրպարտչական մեղադրանքներ: Հաշվի առնելով Քրեական դատավարության օրենսգրքի 118 հոդվածի 3-րդ կետը ...՝ դիմողը կարող է,

սակայն, պատասխանատվության ենթարկվել հրատարակման համար. նրա գործողությունները ճշգրտորեն ներկայացվել են, և չի կարող համարվել, որ նա կաշկանդված է եղել իր պաշտպանությունը նախապատրաստելիս:

«Երիտասարդի հիվանդասենյակի հիվանդները ... Ռեյկյավիկի գիշերային հսկիչ ոստիկանների խումբը» և «Այնուհետև ես պարզեցի ... այլևս սուտ չեն» հատվածները և «ոստիկանական բնությունների զոհերը» բառերը բոլորն էլ և՛ ինքնին, և՛ ... հոդվածի համատեքստում ..., կարող են դիտվել որպես Ռեյկյավիկի ոստիկանական ուժերի չորոշակիացված անդամների դեմ ուղղված մեղադրանքներ՝ առ այն, որ լուրջ վնասվածքներ են պատճառել շատերին, որոնց արդյունքում վերջիններս անդամալույծ են դարձել: Սրա նկատմամբ կիրառելի է Քրեական օրենսգրքի 218 հոդվածը..., որի խախտումը կարող է հանգեցնել մի քանի տարիների ազատազրկման:

Մեղադրյալի ներկայացրած մեղադրանքները հիմնավորված չէին և հրատարակված լինելու [պատճառով] նա պատասխանատու է ըստ Քրեական օրենսգրքի 108 հոդվածի:

«Համազգեստով գազաններ» և «վայրի ոստիկանները» արտահայտությունները ևս պետք է համարվեն վիրավորանքներ և պախարակում ընդդեմ Ռեյկյավիկի ոստիկանական ուժերի չորոշակիացված անդամների: Այս հայտարարությունները, ըստ մեղադրական եզրակացության, զրպարտչական են, բայց մեղադրյալը կարող է դրանց համար պատասխանատվություն կրել, ամեն դեպքում, Քրեական օրենսգրքի 108 հոդվածի հիման վրա:

«Թույլատրելով վայրի և դաժան անձանց կատարել վայրագություններ» բառերը նշված հոդվածի համատեքստում, հանդիսանում են պախարակում և վիրավորանք՝ ուղղված Ռեյկյավիկի ոստիկանական ուժերի չորոշակիացված անդամների դեմ: Մեղադրական եզրակացության մեջ ասված է, որ նշվածը զրպարտչական բառեր են, սակայն ... մեղադրյալն ամեն դեպքում կարող է դրանց համար պատասխանատվություն կրել 108 հոդվածի հիման վրա:

«Նրանց վարքագիծը համապատասխանում էր մեր ոստիկանության վերաբերյալ ձևավորված հասարակական կարծիքին. ահաբեկում, խաբեություն, անօրինական գործողություններ, սնոտիապաշտություն, անզուշտություն և անընդունակություն» պարբերությունը հիմնավորված չէր: Բացի «սնոտիապաշտություն, անզուշտություն և անընդունակություն» բառերից, այս պարբերությունը Ռեյկյավիկի ոստիկանության չորոշակիացված անդամների մեղադրում էր խաբեության և այլ... քրեական հանցանքների մեջ: Սրանց նկատմամբ կիրառելի են Քրեական օրենսգրքի 14 և 17 գլուխները, որոնց խախտումը կարող է հանգեցնել մի քանի տարվա ազատազրկման:

Այս հայտարարությունները կատարելով՝ մեղադրյալը պատասխանատու է դառել 108 հոդվածի հիման վրա:

«Սնոտիապաշտություն, անզուշտություն և անընդունակություն» բառերը, մյուս կողմից, կարող են համարվել թույլատրելի քննադատության սահմաններում կատարված, ուստի մեղադրյալը պատասխանատու չէ դրանց համար...»:

25. Դատավճռի համաձայն՝ մեղադրյալը դատապարտվել է 10.000 իսլանդական կրոնի չափով տուգանքի, որը դատավճռի կայացումից հետո չորս շաբաթվա ընթացքում պետ գանձարան չվճարելու դեպքում՝ մեղադրյալին սպառնում էր 8-օրյա բանտարկություն: Նա նաև պարտադրվել է վճարել դատական բոլոր ծախսերը, ներառյալ՝ իր պաշտպանի հոնորարը:

26. Ե՛վ դիմողը, և՛ դատախազը դատավճիռը բողոքարկել են Իսլանդիայի

գերագույն դատարան, որը գործը լսել է 1987թ. սեպտեմբերի 22-ին: Դիմողի

փաստաբանը պահանջում էր չեղյալ հայտարարել ոչ միայն քրեական դատարանի դատավճիռը, այլ նաև ողջ դատավարությունը՝ սկսած մեղադրական եզրակացության ընդունումից, և գործը հետ ուղարկել քրեական դատարան քննության: Որպես այլընտրանք՝ փաստաբանը փորձում էր հասնել իր պաշտպանյալի արդարացման՝ բոլոր մեղադրանքներում: Դատախազը փորձում էր հասնել պատժի խստացման:

27. 1987թ. հոկտեմբերի 20-ի դատավճռում Գերագույն դատարանը, *inter alia*, նշել է. «... դատավարությունը չեղյալ հայտարարելու վերաբերյալ պահանջը հիմնվում էր այն նույն պատճառաբանությունների վրա, որոնք 1985թ. սեպտեմբերի 24-ին ներկայացվել էին քրեական դատարան, երբ մեղադրյալի պաշտպանը կատարել էր հետևյալ հայտարարությունը.
« մեղադրանքի կողմի որևէ ներկայացուցիչ չի մասնակցել գործով ... որևէ նախկին միստի ... [Քրեական դատավարության օրենսգրքի] 20(1) հոդվածի և 36(1) (1) հոդվածի տեսանկյունից մեղադրյալը գտնում է, որ միևնույն անձի կողմից դատավորի և դատախազի դերակատարությունն անօրինական է: Հաշվի առնելով այն փաստը, որ դատավորը չի ձեռնարկել նշված իրավիճակը շտկելուն ուղղված միջոցներ, ... անհրաժեշտ է [նրա] բացարկը»:
Քրեական դատարանի դատավորը չի բավարարել այս պահանջը, դատախազն էլ մերժել է թույլատրել այդ որոշման բողոքարկումը Գերագույն դատարան... Ինչպես որակված է վերոհիշյալ օրենսգրքի 130 հոդվածով, այս մասնավոր մեղադրանքի հիման վրա հարուցված գործի դատավարության ընթացքում չի ներկայացվել որևէ ապացույց՝ դատավորի բացարկը հիմնավորելու կամ [դատապարտումը] չեղյալ հայտարարելու համար...
Քրեական դատարանի կողմից մեղադրյալին մեղավոր ճանաչելը և քրեական օրենքի կիրառումը ... ինչպես նաև նշանակված պատիժը, հաստատվել են Գերագույն դատարանի կողմից: Անփոփոխ է մնացել դատական ծախսերի վերաբերյալ քրեական դատարանի որոշումը»:

28. Գերագույն դատարանի անդամներից մեկն իր հատուկ կարծիքում նշել է. « Ջրպարտչական հայտարարությունների կապակցությամբ քրեական գործում անհրաժեշտ է հստակորեն որոշել, թե կոնկրետ ում են վնասում տվյալ հայտարարությունները: Սա անհրաժեշտ է ինչպես պաշտպանության գործի համար, այնպես էլ նրա համար, որպեսզի հնարավոր լինի լուծել հասարակական հետաքրքրության հարցերի քննարկման անհրաժեշտ սահմանափակումների դժվարին հարցը: Մեղադրական եզրակացության մեջ նշված է, որ գործը հարուցվել է «ոստիկաններին ներկայացված զրպարտչական մեղադրանքների հիման վրա», որ այդ մեղադրանքներն ուղղված են «ընդդեմ Ռեյկյավիկի ոստիկանական ուժերի չորոշակիացված անդամների»: Մեղադրական եզրակացությունը, ուստի, պետք է հասկանալ որպես Ռեյկյավիկի ոստիկանների դեմ ընդհանրապես ուղղված հանցագործություն: Թեև համաձայնելով, որ մեղադրական եզրակացության մեջ մատնանշված հայտարարությունները խիստ են և, որպես այդպիսիք, հիմնավորված չեն, ես գտնում եմ, հիմնվելով այն ձևի վրա, որով գործը ներկայացված է մեղադրական եզրակացության մեջ, որ 108 հոդվածի խախտման համար պատժի պայմանները..., որը պետք է մեկնաբանվի՝ ելնելով

խոսքի արտահայտման և գրավոր խոսքի ազատության վերաբերյալ իսլանդական սահմանադրական իրավունքի հիմնարար սկզբունքներից, չի կատարվել»:

Ելնելով վերոշարադրյալից՝ ես գտնում եմ, որ մեղադրյալը պետք է արդարացվեր և [քրեական] դատարանում դատական ժախսերը պետք է վճարվեին պետական գանձարանի կողմից. վերջիններս ներառում են Գերագույն դատարանում գործը ներկայացնելու համար նշանակված պաշտպանի հոնորարը:

II. Համապատասխան ներպետական օրենսդրությունը

Ա. Արտահայտվելու ազատությունը և քաղաքացիական ծառայողների զրպարտությունը

29. Իսլանդիայի 1944թ. հունիսի 17-ի Սահմանադրության 72 հոդվածը նախատեսում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր մտքերը տպագիր ձևով արտահայտելու իրավունք: Սակայն նա կարող է դրա համար պատասխանատվություն կրել դատական կարգով: Գրաքննությունը կամ մամուլի ազատության այլ սահմանափակումները երբևէ չեն կարող կիրառվել»:

Այս դրույթում նշված պատասխանատվությունը մանրամասնվում է օրենքներում:

30. Հեղինակը կարող է «Հրատարակման իրավունքների մասին» 1956թ. օրենքի (թիվ 57/1956 օրենք) 15-րդ հոդվածի համաձայն՝ ենթարկվել և՛ քրեական, և՛ քաղաքացիական պատասխանատվության՝ իր իսկ անունից կատարված հրատարակումների համար, եթե տպագրության ժամանակ նա բնակվել է Իսլանդիայում կամ գտնվում է իսլանդական դատարանների իրավագործության ներքո, երբ նրա դեմ գործ է հարուցվում: Եթե հրատարակումը կատարվում է ոչ իր անունից, ապա այդ պատասխանատվությունը կարող են կրել հրատարակիչը, խմբագիրը, վաճառողը, մատակարարը կամ տպագրիչը:

31. Զրպարտչական հրատարակումը հանդիսանում է քրեական հանցագործություն ըստ Քրեական օրենսգրքի: 108 հոդվածը կոնկրետ վերաբերում է քաղաքացիական ծառայողների զրպարտությանը և նախատեսում է. «Յուրաքանչյուր ոք, ով պախարակում կամ որևէ այլ կերպ խոսքերով կամ գործողություններով կամ քաղաքացիական ծառայողների դեմ ուղղված մեղադրանքներով վիրավորում է քաղաքացիական ծառայողին, երբ վերջինս կատարում է իր պարտականությունները, տուգանվում, կալանվում կամ ազատազրկվում է մինչև երեք տարի ժամկետով: Քաղաքացիական ծառայողի դեմ ուղղված մեղադրանքը, նույնիսկ եթե ապացուցվում է, հանգեցնում է տուգանքի, եթե այդ մեղադրանքը ներկայացվել է անպարկեշտ ձևով»:

32. Դիմողի գործում և՛ ըստ քրեական դատարանի, և՛ Գերագույն դատարանի մեծամասնության մեկնաբանության՝ 108 հոդվածը ներառում է ոչ միայն կոնկրետ քաղաքացիական ծառայողի դեմ ուղղված զրպարտչական հայտարարությունները, այլ նաև չորոշակիացված քաղաքացիական ծառայողների սահմանափակ խմբի դեմ ուղղված զրպարտչական հայտարարությունները: Ի պաշտպանություն այս մեկնաբանության՝ նախադեպեր կարելի է գտնել Գերագույն դատարանի երկու դատավճիռներում. Դատախազն ընդդեմ Յոհանս Բրիստյանսոնի 1983թ.

հունվարի 19-ի դատավճիռը և Դատախազն ընդդեմ Ազնար Բոգասունի 1952թ. հոկտեմբերի 31-ի դատավճիռը:

Բ. Քրեական դատավարությունը

33. Քրեական դատավարության օրենսգիրքը քրեական հետապնդում հարուցելու իրավունքը վերապահում է գլխավոր դատախազին, որին օգնում է դատախազի օգնականը, մի քանի դատախազ և տեղակալ: Նա որոշում է, թե քրեական գործերով քննությունը ինչպես պետք է կատարվի և վերահսկում է քննության ընթացքը (21-րդ հոդված):

34. 115-րդ հոդվածի համաձայն՝ գլխավոր դատախազը կարող է քրեական գործ հարուցել՝ մեղադրյալի նկատմամբ մեղադրական եզրակացություն ընդունելով: Սրանում պետք է հստակ նշվեն, *inter alia*, այն դատարանը, որին պետք է հանձնվի գործը, մեղադրյալի անունը, մեղսագրվող հանցագործությունը և հնարավոր պատիժը: Այնուհետև մեղադրական եզրակացությունը գործի հետ միասին հանձնվում է համապատասխան դատարան: Դատավորը, որը նշանակվել է գործի քննության համար, մեղադրական եզրակացության հիման վրա, որն այնուհետև հանձնվում է մեղադրյալին, նշում է գործի քննությունը պաշտոնապես սկսելու օրը:

35. Համաձայն 121-րդ հոդվածի՝ գործի քննությունը պաշտոնապես սկսելու օրը դատարանի նիստի գումարման օրն է, որի ընթացքում քրեական դատարանը մեղադրական եզրակացությունը և մյուս առկա փաստաթղթերը ներկայացնում է մեղադրյալին: Եթե մեղադրյալը կատարում է հստակ խոստովանություն, ապա անմիջապես կայացվում է դատավճիռ: Այլապես, նրան տրվում է հնարավորություն ներկայացնելու ապացույցներ և կազմակերպելու իր պաշտպանությունը՝ գրավոր կամ բանավոր ընթացակարգով՝ իր համար նշանակված պաշտպանի միջոցով:

36. Գլխավոր դատախազն է որոշում, թե արդյոք տվյալ գործով անհրաժեշտ է կիրառել մրցակցային դատավարություն, ինչպես սահմանված է (131-136)-րդ հոդվածներում: Այս դեպքում, մեղադրանքի կողմը պետք է ներկա գտնվի քրեական դատարանում: 130-րդ հոդվածի համաձայն՝ նման ընթացակարգ կիրառվում է, եթե.

ա. տվյալ հանցագործությունը պատժելի է ազատազրկմամբ ավելի քան ութ տարի ժամկետով,

բ. հանցագործությունը պատժելի է ազատազրկմամբ ավելի քան հինգ տարի ժամկետով, և իրավունքի ու փաստի հարցերը պահանջում են նման ընթացակարգ, կամ

գ. գործը վերաբերում է հատուկ կարևորության հարցերի, կամ գործի ելքը հասարակական մեծ կարևորություն ունի:

Եթե մրցակցային դատավարություն չի կիրառվում, գործի վարույթը կարգավորվում է (123-129)-րդ հոդվածներով: Մեղադրյալն իր գործը դատավորի առջև ներկայացնում է դատախազի բացակայությամբ, եթե գլխավոր դատախազն այլ բան չի որոշում:

37. Եթե դատախազը չի ներկայացնում դատարան, դատավորը պետք է 75-րդ հոդվածում ամրագրված ընդհանուր դրույթի համաձայն՝ *ex officio* և անկախ կերպով քննի գործի բոլոր փաստերն ու հարցերը, նույնիսկ եթե մեղադրանքի կողմն արդեն քննել է դրանք և պատրաստել դրանց վերաբերյալ զեկույցներ: Դատավորը պետք է նաև քննության առնի մեղադրյալի մեղավորությանը կամ անմեղությանն առնչվող բոլոր գործոնները և բոլոր մեղմացուցիչ կամ ծանրացուցիչ հանգամանքները: Քննությունն ավարտելուն պես և մեղադրյալի

կամ նրա պաշտպանի կողմից ապացույցները կամ գրավոր բացատրությունները ներկայացնելուց հետո դատավորը լուծում է գործը՝ բոլոր ապացույցների հիման վրա:

38. Քրեական դատարանի դատավճիռը բողոքարկվում է Գերագույն դատարան: Դատախազը պետք է ներկայանա Գերագույն դատարանում բողոքի քննությանը, նույնիսկ եթե քրեական դատարանում ներկա չի գտնվել նիստերին:

39. Գերագույն դատարանն իրավասու է վերանայելու և՛ փաստի, և՛ իրավունքի հարցերը: 185-րդ հոդվածի համաձայն՝ Գերագույն դատարանը կարող է չեղյալ հայտարարել ողջ դատավարությունը կամ, որպես այլընտրանք, քրեական դատարանի դատավճիռը, եթե գտնում է, որ առաջին ատյանի դատարանում գործի քննությունն ընթացել է լուրջ սխալներով: Այս դեպքում գործն ամբողջությամբ կամ մասամբ հետ է ուղարկվում ստորին ատյանի դատարան՝ նոր դատաքննության համար:

40. 171-րդ հոդվածի համաձայն՝ մեղադրյալը կարող է, դատախազի թույլտվությամբ, քրեական դատարանի դատավորի կողմից բացարկի ընդունումը մերժելու դեմ հակիրճ բողոք ներկայացնել Գերագույն դատարան: Եթե դատախազը նման թույլտվություն չի տալիս, մեղադրյալը կարող է Գերագույն դատարան ներկայացնել սովորական բողոք՝ պահանջելով չեղյալ հայտարարել քրեական դատարանում կայացած դատավարությունը՝ այն հիմքով, որ դատավորը պետք է ընդուներ բացարկը:

41. Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 36 հոդվածը (թիվ 85/1936 օրենք), որը Քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն կիրառվում է նաև քրեական գործերի նկատմամբ, նախատեսում է, որ դատավորը պետք է բացարկն ընդունի հետևյալ դեպքերում.

- ա. եթե նա գործով կողմ է կամ ներկայացուցիչ կամ առնչություն ունի կողմերից մեկի հետ,
- բ. եթե նա գործի փաստերի վերաբերյալ վկայություն է տվել կամ գործի կապակցությամբ ծառայել է որպես վերստուգող կամ գնահատող,
- գ. եթե նա գործի կապակցությամբ փաստարկներ է ներկայացրել կամ խորհուրդ է տվել կողմերից մեկին,
- դ. եթե նա թշնամական հարաբերություններ ունի կողմերից մեկի հետ,
- ե. եթե գործը ֆինանսական կամ բարոյական հետաքրքրություն ունի իր կամ իր հարազատների համար,
- զ. եթե որևէ այլ կերպ առկա է վտանգ, որ նա չի կարող գործը քննել անաչառորեն:

Եթե նշված հիմքերից որևէ մեկի հիման վրա դատավորը բացարկն ընդունում է, ապա արդարադատության նախարարը գործի քննության համար նշանակում է մեկ այլ դատավորի:

Գ. Քրեական դատավարության օրենսգրքի վերանայումը

42. Ակնկալվում է, որ վերանայված Քրեական դատավարության օրենսգրքն ուժի մեջ կմտնի 1992թ. հուլիսի 1-ին: Նախագծի 123-րդ հոդվածը նախատեսում է, որ եթե դատախազը չի ներկայանում դատական նիստին, գործը պետք է հետաձգվի:

ՎԱՐՈՒՅՑԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

43. 1987թ. նոյեմբերի 19-ին Հանձնաժողով ներկայացրած իր գանգատում (թիվ 13778/88) Թյորգեր Թյորգերսոնը նշել է, որ իր դեմ գրպարտության համար հարուցված գործի կապակցությամբ դատավարության և իր դատապարտման արդյունքում տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3(c) կետերի (անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության և անձամբ իրեն պաշտպանելու իրավունքներ) և 10-րդ հոդվածի խախտում (արտահայտվելու ազատության իրավունք):

44. 1990թ. մարտի 14-ին Հանձնաժողովն ընդունելի է հայտարարել գանգատները, որոնք վերաբերում են.

ա. դիմողի դատավարության ընթացքում դատական որոշ նիստերի դատախազի բացակայությանը և Ռեյկյավիկի քրեական դատարանի անաչառության վրա այդ հանգամանքի ազդեցությանը, և

բ. միջամտությանը՝ դիմողի արտահայտվելու ազատությանը:

Գանգատների մնացած մասերը հայտարարվել են անընդունելի:

1990թ. դեկտեմբերի 11-ին ընդունված իր զեկույցում (31-րդ հոդված) Հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել (միաձայն), տեղի է ունեցել 10-րդ հոդվածի խախտում (13 ձայնով ընդդեմ 1-ի):

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՂԱՏԱՐԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

45. 1992թ. հունվարի 22-ի նիստում, Կառավարությունը դիմել է Դատարանին վճիռ կայացնել առ այն, ինչպես ներկայացրել էր 1991թ. սեպտեմբերի 16-ի իր գրավոր բացատրություններում, որ սույն գործով Կոնվենցիայի որևէ խախտում տեղի չի ունեցել:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ

I. 6-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1- ԻՆ ԿԵՏԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄԸ

46. Պրն Թյորգեր Թյորգերսոնը վիճարկում էր, որ իր գործը քննության չի առնվել «անաչառ դատարանի» կողմից՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, որը, գործին առնչվող մասով, նախատեսում է.

« Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են ... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի ... անաչառ դատարանի կողմից ... արդարացի ... դատաքննության իրավունք...»:

Դիմողը գանգատվում էր, որ Իսլանդիայի գործող օրենսդրության համաձայն (տես վերը՝ կետ 36)՝ նվազ լուրջ գործերը, որոնք մրցակցային դատավարություն չեն պահանջում, կարող են քննության առնվել դատախազի բացակայությամբ: Ըստ դիմողի՝ սա նշանակում է, որ շրջանային դատավորները նման դեպքերում իրավասու են կատարելու դատախազի գործառույթներ: Այս իրավիճակը քննադատության է ենթարկվել բազմաթիվ շրջանային դատավորների կողմից, և գտնվում է փոփոխության նախաշեմին. քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 123-րդ հոդվածի համաձայն, որը ենթադրվում է ուժի մեջ կմտնի 1992թ. հուլիսի 1-ին, գործը պետք է հետաձգվի, եթե դատախազը չի ներկայացել նիստին:

Դիմողը պնդում էր, որ իր իսկ գործով, որի քննության ընթացքում դատախազը բացակայել է Ռեյկյավիկի քրեական դատարանի մի շարք նիստերից, այս օրենսդրության արդյունքում դատավոր Պետր Գուդգեյրսոնը՝

դատարանի միակ անդամը, ոչ միայն իրականացրել է գործի քննությունը, այլ նաև ստանձնել է մեղադրանքի կողմի դերը: Հետևաբար, քրեական դատարանը չի բավարարել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ անաչառության պահանջը:

47. Կառավարությունն առարկել է այս գանգատի դեմ, և Հանձնաժողովը չի ընդունել գանգատը:

48. Հարկ է կրկին նշել, որ Դատարանի խնդիրը չէ վերացական կարգով վերանայել գործին առնչվող օրենսդրությունը և պրակտիկան, այլ Դատարանը որոշում է, թե արդյոք դրանց կիրառումը կամ դրանց ազդեցությունը դիմողի վրա եղել է այնպիսին, որ հանգեցրել է 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման (ի թիվս այլ աղբյուրների՝ տես, Հուլիլըն ընդդեմ Դանիայի 1989թ. մայիսի 24-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 154, էջ 21, կետ 45):

49. 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակներով՝ անաչառության առկայությունը պետք է որոշվի սուբյեկտիվ գնահատման միջոցով, այն է՝ տվյալ գործը քննող կոնկրետ դատավորի անձնական տրամադրվածության և համոզվածության հիման վրա, ինչպես նաև համաձայն օբյեկտիվ գնահատման, այն է՝ պարզելով, թե արդյոք տվյալ դատավորն ապահովել է այն երաշխիքները, որոնք անհրաժեշտ են բացառելու նրա անաչառության վերաբերյալ ցանկացած օրինական կասկած (ibid., կետ 46):

50. Ինչ վերաբերում է սուբյեկտիվ ստուգմանը, դատավորի անձնական անաչառությունը ենթադրվում է, քանի դեռ հակառակը չի ապացուցված (ibid., կետ 47). դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց առ այն, որ դատավորն անձնապես կանխակալ մոտեցում է ունեցել:

51. Ինչ վերաբերում է օբյեկտիվ գնահատմանը, պետք է որոշվի, թե արդյոք, անկախ դատավորի անձնական վարքագծից, կան որոշակի փաստեր, որոնք կարող են կասկած հարուցել դատավորի անաչառության կապակցությամբ: Այս առնչությամբ առերևույթ հանգամանքները կարող են որոշակի կարևորություն ունենալ: Վտանգված է այն վստահությունը, որը ժողովրդավարական հասարակությունում բնակչությունը և, քրեական գործի պարագայում, մեղադրյալը պետք է ունենա դատարանների հանդեպ: Հետևաբար, ցանկացած դատավոր, ում անաչառության վերաբերյալ առկա է որևէ օրինական կասկած, պետք է հեռացվի գործի քննությունից:

Սա նշանակում է, որ դատավորի անաչառությունը կասկածի տակ առնող որևէ օրինական պատճառի առկայության հարցը որոշելիս՝ մեղադրյալի տեսակետը կարևոր է, բայց ոչ որոշիչ: Որոշիչն այն է, թե արդյոք մտահոգությունը կարող է օբյեկտիվորեն հիմնավորված լինել (ibid., կետ 48):

52. Դատարանը նշում է, որ տվյալ գործով Ռեյկյավիկի քրեական դատարանը գումարել է 12 նիստ՝ 1985թ. սեպտեմբերի 10-ից մինչև 1986թ. հունիսի 16-ը: Դատախազը բացակայել է 6 նիստից, որոնց ընթացքում քննարկվել են հետևյալ հարցերը.

ա. 1985թ. սեպտեմբերի 10. դիմողի պահանջով (որը ևս բացակա էր), դատարանը որոշել է գործը հետաձգել (տես վերը՝ կետ 16),

բ. 1985թ. սեպտեմբերի 17. այս նիստն ունեցել է նախապատրաստական բնույթ (տես վերը՝ կետ 16),

գ. և դ. 1985թ. սեպտեմբերի 24 և 25. դատարանն անդրադարձել է միայն դատավարական բնույթի հարցերի, որոնք չեն վերաբերվել գործի՝ ըստ էության հանգամանքներին (տես վերը՝ 17-18 կետեր),

ե. 1986թ. հունիսի 3. դիմողը ներկայացրել է իր գրավոր պաշտպանությունը (տես, վերը՝ կետ 23),

զ. 1986թ. հունիսի 16. դատարանը կայացրել է դատավճիռ (տես վերը՝ կետ 24):

Մյուս կողմից, դատախազը, մեկ բացառությամբ, ներկա է գտնվել մյուս բոլոր նիստերին, որոնց ընթացքում ներկայացվել են ապացույցներ և տրվել են վկայություններ (1985թ. հոկտեմբերի 9-25, 1985թ. նոյեմբերի 15, 1986թ. հունվարի 31 և 1986թ. փետրվարի 17, տես, վերը՝ կետեր 20-21): Բացառությունը 1986թ. փետրվարի 17-ի նիստն էր, որը հիմնականում նվիրված էր հեռուստահաղորդման տեսագրության ցուցադրմանը: Ե՛վ դիմողը, և՛ դատախազը ներկա են գտնվել հաջորդ՝ 1986թ. ապրիլի 28-ի նիստին, որի ժամանակ համաձայնել են, որ հետագա քննություն չի պահանջվում (տես վերը՝ կետ 22):

53. Վերոշարադրյալից երևում է, որ այն նիստերին, որոնց դատախազը ներկա չի գտնվել, Ռեյկյավիկի քրեական դատարանը չի կատարել գործի ըստ էության քննություն, չի ստանձնել որևէ գործառույթ, որը պետք է իրականացվեր դատախազի կողմից, եթե նա ներկա լիներ նիստին: Այս հանգամանքներից ելնելով՝ Դատարանը չի գտնում, որ դատախազի բացակայությամբ պայմանավորված՝ Ռեյկյավիկի քրեական դատարանի անաչառության բացակայության կապակցությամբ դիմողի ունեցած մտահոգությունը հիմնավորված է:

54. Հետևաբար, 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

II.10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄԸ

55. Պրն Թյորգեր Թյորգերսոնը գանգատվում էր, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում, որը նախատեսում է.

« 1. Յուրաքանչյուր ոք ունի արտահայտվելու ազատության իրավունք:

Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից...

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլոց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

Այս պնդումն ընդունվել է Հանձնաժողովի կողմից, սակայն Կառավարությունն առարկել է դրա դեմ:

56. Դատարանը գտնում է, և սա չի վիճարկվում, որ Ռեյկյավիկի քրեական դատարանի կողմից 1986թ. հունիսի 16-ին դիմողի դատապարտումը զրպարտության համար, որը նաև հաստատվել է Գերագույն դատարանի կողմից 1987թ. հոկտեմբերի 20-ին (տես վերը՝ 24-25 կետեր և 27 կետ), հանդիսանում է միջամտություն նրա արտահայտվելու ազատության իրավունքին: Նման միջամտությունը հանդիսանում է 10-րդ հոդվածի խախտում, եթե դա «նախատեսված չէ օրենքով», չի հետապնդում որևէ նպատակ կամ նպատակներ, որոնք

10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն համարվում են իրավաչափ, և «անհրաժեշտ չեն ժողովրդավարական հասարակությունում» այդ նպատակի կամ նպատակների համար:

Ա. Նախատեսված էր, արդյոք, միջամտությունն օրենքով:

57. Դիմողը, հիմնվելով իր գործի կապակցությամբ Գերագույն դատարանի անդամներից մեկի հատուկ կարծիքի վրա (տես վերը՝ կետ 28), նշել է, որ Քրեական օրենսգրքի 108 հոդվածը, մեկնաբանվելով արտահայտվելու ազատության սահմանադրական իրավունքի լուսի ներքո, չէր կարող պատշաճ հիմք հանդիսանալ իր դատապարտման համար:

58. Այնուամենայնիվ, Դատարանը նշում է, որ այն ձևը, որով Ռեյկյավիկի քրեական դատարանը և այնուհետև Գերագույն դատարանի մեծամասնությունը (տես վերը՝ 24 և 27 կետեր) մեկնաբանել և կիրառել են այդ հոդվածը սույն գործով, իր ձևակերպումներով չի շեղվել նախադեպից և, ավելին, հիմնվել է նախադեպի վրա (տես, կետ 32): Բացի դրանից, ներպետական իշխանությունները, հատկապես դատարաններն են կոչված մեկնաբանելու և կիրառելու ներպետական իրավունքը (տես, ի թիվս այլ աղբյուրների, Կրասլին ընդդեմ Ֆրանսիայի 1990թ. ապրիլի 24-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 176-Ա, էջ 21, կետ 29): Հետևաբար, դատարանը համաձայնում է Կառավարությանը և Հանձնաժողովին, որ միջամտությունը «նախատեսված էր օրենքով»:

Բ. Միջամտությունն ունե՞ր, արդյոք, իրավաչափ նպատակ:

59. Այն, որ դիմողի դատապարտումը նպատակ է ունեցել պաշտպանելու «... այլոց հեղինակությունը», չի վիճարկվել, և, ուստի, նպատակը, ըստ այս դրույթի, իրավաչափ էր:

Գ. Անհրաժեշտ էր, արդյոք, միջամտությունը ժողովրդավարական հասարակությունում:

60. Առարկելով դիմողի և Հանձնաժողովի այն տեսակետի դեմ, որ վիճարկվող միջամտությունն անհրաժեշտ չէր «ժողովրդավարական հասարակությունում»՝ Կառավարությունը ներկայացրել է բացատրություններ, որոնք բաժանվում են երկու խմբի. մի խումբը վերաբերում է ընդհանուր սկզբունքային հարցերի, երկրորդը՝ գործի կոնկրետ հանգամանքներին:

61. Առաջին խմբի մեջ մտնող բացատրությունները կարելի է հակիրճ ներկայացնել հետևյալ կերպ.

ա. Լինգենսն ընդդեմ Ավստրիայի գործով Դատարանի 1986թ. հուլիսի 8-ի վճիռը (Շարքեր Ա, թիվ 103), Բարֆոդն ընդդեմ Դանիայի գործով 1989թ. փետրվարի 22-ի վճիռը (Շարքեր Ա, թիվ 149) և Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի գործով 1989թ. մայիսի 23-ի վճիռը (Շարքեր Ա թիվ 204) ցույց են տալիս, որ քաղաքական քննարկումներում ընդունելի քննադատության լայն սահմանները միևնույն ժամկետով չեն կիրառվում հասարակական հետաքրքրության այլ հարցերի նկատմամբ: Դիմողի կողմից բարձրացված՝ հասարակական հետաքրքրության հարցերը չէին կարող ներառվել քաղաքական քննարկումներ կատեգորիայի մեջ, որոնք նշանակում են քաղաքացիների ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ժողովրդավարական հասարակությունում որոշումների կայացման

գործընթացին. բ. քաղաքացիական ծառայողների գործողությունները շարունակաբար կլինեին ուշադրության կենտրոնում և բաց կլինեին քննադատության համար: Այնուամենայնիվ, քանի որ նրանք չունեն արձագանքելու միջոցներ, անթույլատրելի էր առանց օրինական պատճառի մեղադրել նրանց հանցավոր վարքագծի համար.

գ. Չնայած (ա) կետում նշված տարբերություններին՝ նշված երեք վճիռներում հստակորեն նշված է, որ անձը, ով զանգատվում է, որ արտահայտվելու իր ազատությունն առանց անհրաժեշտության սահմանափակվել է, պետք է ինքը ևս իր այդ ազատությունը կիրառած լինի ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան. նա պետք է բարի կամք դրսևորի իր հայտարարությունների օրինականության կապակցությամբ և դրանք ի լուր բոլորի հայտարարի ժողովրդավարական նպատակներին հարիր ձևով: Ի հավելումն, հայտարարությունները պետք է արդյունավետորեն նպաստեն այդ նպատակներին և հիմնավորված լինեն փաստերով:

62. Գործի կոնկրետ հանգամանքների կապակցությամբ Կառավարությունը ներկայացրել է հետևյալը.

ա. Դիմողի հոդվածներում տեղ գտած հայտարարությունները զուրկ են օբյեկտիվ և փաստացի հիմքից: Ոստիկանական բռնություններն անսովոր են Իսլանդիայի համար. վերջին 15 տարիների ընթացքում արձանագրվել է միայն երկու դեպք, երբ ոստիկանը դատապարտվել է ֆիզիկական վնասվածքներ պատճառելու համար: Առաջին հոդվածում նշված պատմությունը տեղական հիվանդանոցում բուժվող երիտասարդի մասին (տես վերը՝ 9(8)-(9) կետեր) ամբողջովին ճշմարտությանը չէր համապատասխանում և պարզապես հորինված էր ոստիկանության դեմ արշավի համար հիմնավորումներ ներկայացնելու նպատակով: Դիմողը մերժել է համագործակցել այս հարցը պարզաբանելու գործում և չի ներկայացրել որևէ ապացույց՝ ի հիմնավորումն իր պնդումների: Այս կապակցությամբ Կառավարությունը վկայակոչել է ոմն Թրասթի էլլիդասոնի հայտարարությունը, որը տվյալ ժամանակահատվածում գտնվել է հիվանդանոցում, և Ռեյկյավիկի քրեական դատարանում գործի դատավարությունը (տես վերը՝ 21 և 24 կետեր): Չնայած նրան, որ դիմողին գործողությունների մղել էր Սկաֆթի Ջոնսոնի գործը, նրա առաջին հոդվածը չէր հիմնվում այդ գործի վրա, որը բնութագրված էր որպես «չնչին կարևորություն ունեցող»: Դրա փոխարեն այն անդրադառնում էր ոստիկանական բռնություններին, որոնք երբեք չէին ներկայացվի ի գիտություն հասարակությանը, և նշել է, որ «իրական հիմնախնդիրը» «փաստացիորեն ավելի մեծ է և ավելի մտահոգիչ» (տես վերը՝ 9 (4) կետ): Երկրորդ հոդվածում դիմողը չի քննարկել առանձին դեպքեր, այլ ներկայացրել է ընդհանուր մի իրավիճակ, որն ըստ նրա բաղկացած է առնվազն մի քանի հարյուր դեպքերից (տես վերը՝ 10(8) կետ):

բ. դիմողի հոդվածները չեն սահմանափակվել ոստիկանության պարտականությունների կատարման ձևերի քննադատությամբ: Հեղինակի հիմնական նպատակը ոստիկանության դեմ ուղղված զանգատների քննության նոր մեթոդներ առաջարկելը չէր, այլ իրավախախտումների, ներառյալ՝ լուրջ հանցագործությունների կապակցությամբ որոշակի մեղադրանքներ ներկայացնելու միջոցով Ռեյկյավիկի ոստիկանության՝ որպես մեկ ամբողջության, հեղինակության վարկաբեկումն էր.

գ. Նույնիսկ եթե ընդունելու լինենք, որ դիմողի հայտարարություններն ունեցել են փաստական հիմք, նա ակնհայտորեն գերազանցել է բոլոր ողջամիտ սահմանները՝ օգտագործելով խիստ, վիրավորական և պախարակիչ ոճ և ոստիկանությանը զամեղով անարգանքի սյունին:

դ. կիրառված պատժամիջոցը, որը չէր ընդգրկում հողվածների առգրավումը, աննշան էր և ուղղված չէր հասարակական հետաքրքրության հարցերի շուրջ բաց քննարկմանը խոչընդոտելուն:

63. Դատարանը կրկնում է, որ արտահայտվելու ազատությունը ժողովրդավարական հասարակության էական հիմքն է. համաձայն 10-րդ հոդվածի 2-րդ կետի՝ այն կիրառելի է ոչ միայն այն «տեղեկատվության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք ընդունվում են բարեհաճությամբ կամ համարվում են անվտանգ, այլ նաև նրանց, որոնք վիրավորում են, անհանգստացնում և խառնաշփոթ առաջացնում: Արտահայտվելու ազատությունը, ինչպես անրագրված է 10-րդ հոդվածում, ենթակա է որոշակի բացառությունների, որոնք, սակայն, պետք է նեղ մեկնաբանության արժանանան, և ցանկացած սահմանափակման անհրաժեշտություն պետք է համոզիչ կերպով հիմնավորվի (տես, Օբգերվերը և Գարդիանն ընդդեմ Միացյալ Թագավորության 1991թ. նոյեմբերի 26-ի վճիռը: Շարքեր Ա, թիվ 216, էջեր 29-30, կետ 59):

Տվյալ գործում դիմողն իր տեսակետներն արտահայտել է դրանք թերթում տպագրելու միջոցով: Ուստի ուշադրության պետք է արժանանա իրավական պետությունում մամուլի խիստ կարևոր դերը (տես, Կաստելն ընդդեմ Իսպանիայի 1992թ. ապրիլի 23-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 236, էջ 23, կետ 43): Թեև մամուլը չպետք է գերազանցի նախատեսված սահմանները, *inter alia*, ամեն դեպքում մամուլի պարտականությունն է ներկայացնել հասարակական հետաքրքրության տեղեկատվություն և գաղափարներ: Մամուլի խնդիրը միայն նման տեղեկատվություն և գաղափարներ տարածելու մեջ չէ. հասարակությունը ևս իրավունք ունի ստանալու նման տեղեկատվություն և գաղափարներ: Այլապես, մամուլը չէր կարողանա կատարել «հասարակական պահապան շան» իր կենսական դերը (տես վերոհիշյալ Օբգերվերը և Գարդիանն ընդդեմ Միացյալ թագավորության վճիռը, էջեր 29-30, կետ 59):

64. Կառավարության ներկայացրած՝ ընդհանուր սկզբունքային հարցերի կապակցությամբ Դատարանը նշում է, որ իր նախադեպային իրավունքում չկա որևէ հիմք՝ տարբերակում կատարելու համար քաղաքական քննարկումների և հասարակական հետաքրքրության այլ հարցերի շուրջ քննարկումների միջև, ինչպես առաջարկում էր Կառավարությունը: Կառավարության փաստարկները, որոնք փորձում էին խոսքի ազատության իրավունքը սահմանափակել 10-րդ հոդվածի այն դրույթի հիման վրա, որ այդ իրավունքի իրականացումը «կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ», հաշվի չեն առնում այն հանգամանքը, որ այդ իրավունքի իրականացումը կարող է սահմանափակվել միայն այդ հոդվածի 2-րդ կետում նշված պայմաններում:

65. Ինչ վերաբերում է գործի կոնկրետ հանգամանքներին, Դատարանը չի կարող ընդունել Կառավարության այն փաստարկը, որ դիմողի հողվածներում առկա հայտարարությունները զուրկ են օբյեկտիվ և փաստացի հիմքից:

Առաջին հողվածը որպես ելակետ՝ հիմք է ընդունել վատ վերաբերմունքի վերաբերյալ կոնկրետ գործ՝ Սկաֆթի Ջոնսոնի գործը, որը հարուցել է հասարակական քննարկումներ և հանգեցրել պատասխանատու ոստիկանների դատապարտմանը: Անվիճելի է, որ այս դիպվածը տեղի է ունեցել:

Հողվածներում բովանդակվող այլ փաստական տարրերի կապակցությամբ Դատարանը նշում է, որ դրանք հիմնականում բաղկացած էին ոստիկանական բռնությունների մասին «պատմություններից» կամ «ասեկոսեներից», որոնք բխում էին այլ անձանցից (ոչ դիմողից), կամ «հասարակական կարծիքից»: Օրինակ, հիվանդանոցում գտնվող երիտասարդի հիվանդասենյակի

հիվանդներն էին պատմել, և հիվանդանոցի անձնակազմն էլ հաստատել էր, որ նրան վնասվածքներ պատճառել են ոստիկանները (տես վերը՝ 9(9) կետ): Ինչպես նշվել է Հանձնաժողովի կողմից, չի ապացուցվել, որ այդ «պատմությունը» իրականությանը չի համապատասխանում և պարզապես հորինված է: Կրկին, առաջին հոդվածի համաձայն՝ դիմողը պարզել է, որ շատերը գիտեն նման բնույթի պատմություններ, որոնք այնքան նույնատիպ ու բազմաթիվ են, որ դրանց դժվար թե կարելի է վերաբերվել որպես պարզապես հորինվածքի (տես վերը՝ 9(9) կետ):

Կարճ ասած՝ դիմողը հիմնականում հայտնում էր այն, ինչ ոստիկանական բռնությունների մասին ասել էին այլոք: Նա Ռեյկյավիկի քրեական դատարանի կողմից դատապարտվել էր Քրեական օրենսգրքի 108 հոդվածի հիման վրա՝ հանցագործություն կատարած լինելու համար, քանի որ չէր կարողացել հաստատել ոստիկանությանը ներկայացրած իր մեղադրանքները, այն է՝ որ Ռեյկյավիկի ոստիկանության չորոշակիացված անդամներ բազմաթիվ մարմնական վնասվածքներ են պատճառել այլոց, որոնք հանգեցրել են նրանց զոհերի անդամալուծության, ինչպես նաև կատարել են խարդախություն և այլ քրեական հանցանքներ (տես վերը՝ 9(9) – (10), 10 (15) և 24 կետեր): Այնքանով, որքանով դիմողից պահանջվել է ապացուցել իր հայտարարությունների ճշմարիտ լինելը, Դատարանի կարծիքով դիմողին ներկայացվել է ոչ ողջամիտ, եթե ոչ անհնարին խնդիր:

66. Դատարանի համար համոզիչ չէ նաև Կառավարության այն պնդումը, որ դիմողի հոդվածների հիմնական նպատակը եղել է Ռեյկյավիկի ոստիկանության՝ որպես մեկ ամբողջություն, հեղինակության վարկաբեկումը:

Առաջին հերթին, նրա քննադատությունը չէր կարող դիտվել որպես հարձակում ընդդեմ Ռեյկյավիկի ոստիկանական ուժերի բոլոր անդամների կամ կոնկրետ անդամի: Ինչպես նշված է առաջին հոդվածում, դիմողն ընդունել է, որ «համեմատաբար փոքրաթիվ անձինք են պատասխանատու», և հուսով է, որ անկախ հետաքննությունը ցույց կտա, որ պատասխանատու է միայն ոստիկանների փոքրամասնությունը (տես վերը՝ 9(19) – (20) կետեր): Երկրորդ, ինչպես Դատարանը նկատել է 65 կետում, դիմողը հիմնականում հայտնել է այն ամենը, ինչ ասել են այլոք:

Այս հանգամանքները՝ առաջին հոդվածի մանրակրկիտ ուսումնասիրության հետ մեկտեղ, հաստատում են նրա այն պնդումը, որ իր հիմնական նպատակը եղել է մղել արդարադատության նախարարին ստեղծելու անկախ և անաչառ մարմին՝ ոստիկանության բռնությունների վերաբերյալ զանգատները քննության առնելու համար: Երկրորդ հոդվածը, որը գրվել էր ի պատասխան հեռուստահաղորդման ընթացքում ոստիկանական պաշտոնյայի որոշակի հայտարարությունների, պետք է դիտել որպես առաջին հոդվածի շարունակություն:

67. Հոդվածները վերաբերում էին հասարակական հետաքրքրության լուրջ հարցերի, ինչը փաստորեն չէր վիճարկվում: Ճիշտ է, որ երկու հոդվածներն էլ կազմված էին խիստ ձևակերպումներով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով դրանց նպատակը և այն ազդեցությունը, որոնց դրանք նպատակաուղղված էին, Դատարանը գտնում է, որ օգտագործված լեզուն չի կարող չափազանցված համարվել:

68. Վերջապես, Դատարանը գտնում է, որ դատապարտումը կարող էր խոչընդոտել հասարակական հետաքրքրության հարցերի բաց քննարկմանը:

69. Հաշվի առնելով վերոհիշյալը՝ Դատարանը հանգել է այն եզրակացության, որ Կառավարության ներկայացրած պատճառաբանությունները բավարար չեն ապացուցելու համար, որ վիճարկվող միջամտությունը համարժեք է եղել հետապնդվող օրինական

նպատակին: Ուստի, այն «անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում»:

70. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

III. 50-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

71. Պրն Թյորգեր Թյորգերսոնը պահանջել է արդարացի բավարարում 50-րդ հոդվածի հիման վրա, որի համաձայն.

«Եթե Դատարանը գտնում է, որ Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավական կամ այլ մարմնի կողմից ընդունված որոշումը կամ կիրառված միջոցառումը հակասում է Կոնվենցիայի ... բխող պարտավորություններին, և եթե տվյալ Պայմանավորվող կողմի ներպետական իրավունքը թույլ է տալիս տվյալ որոշման կամ միջոցառման հետևանքների համար միայն մասնակի փոխհատուցում, Դատարանը, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին տրամադրում է արդարացի բավարարում»:

Ա. Դիմողի կողմից կատարված աշխատանքը

72. Դիմողը պահանջել է 875.250 իսլանդական կրոն՝ գործի կապակցությամբ յոթ տարիների իր աշխատանքի համար, որը, ինչպես ինքն է նշել, զբաղեցրել է ամեն տարի իր ազատ ժամանակի 41 օրը:

Դատարանն «արդարացի բավարարում» տրամադրում է՝ միայն եթե «անհրաժեշտ է»: Դիմողը, որն ինչպես Իսլանդիայում, այնպես էլ Ստրասբուրգում հանդես էր եկել փաստաբանի աջակցությամբ, չի հիմնավորել իր սեփական աշխատանքի համար փոխհատուցում տրամադրելու անհրաժեշտությունը:

Բ. Նյութական վնաս

73. Դիմողը պահանջել է 2.020.200 իսլանդական կրոն՝ որպես փոխհատուցում իր բաց թողնված եկամտի համար (24.050 յուրաքանչյուր ամիս՝ 1984-1991թթ.), ինչն արդյունք էր «այլախոհի իր կարգավիճակի»:

Կառավարությունն առարկել է այս պահանջի դեմ, իսկ Հանձնաժողովը հարցի լուծումը թողել է Դատարանին:

Դատարանը չի կարող ընդունել այս պահանջը, քանի դեռ չի հաստատվել, որ բավարար կապ կա վիճարկվող կորստի և այն հարցի միջև, որը ըստ սույն վճռի, հանդիսանում է 10-րդ հոդվածի խախտում:

Գ. Ծախսեր և ծախքեր

74. Ծախսերի և ծախքերի կապակցությամբ դիմողը պահանջել է.

ա. 218.160 իսլանդական կրոն՝ Ստրասբուրգում դատավարության ընթացքում ներկայացված փաստաթղթերի թարգմանության համար,

բ. 134.392 կրոն՝ այդ բոլոր փաստաթղթերի համակարգչային շարվածքի համար,

գ. 250.000 կրոն՝ որպես Թոմաս Գանարսոնի 100-ժամյա աշխատանքի դիմաց հոնորար (2.008 կրոն յուրաքանչյուր ժամվա համար, գումարած 24.5%՝ ավելացված արժեքի հարկ)՝ կոնվենցիոնալ մարմիններում իր շահերը ներկայացնելու համար,

դ. 73.473 կրոն՝ նշանակված տուգանքի և ներպետական վարույթներում դատական ծախսերի դիմաց:

75. ա. և բ. կետերի կապակցությամբ Կառավարությունը պատրաստակամություն է հայտնել վճարելու համապատասխան գումար, որը Դատարանը կգնահատի դիմողի ներկայացրած մանրամասն ծախսերի հիման վրա: Կառավարության կարծիքով, գ. կետը հիմնավորված էր:

Մյուս կողմից, Կառավարությունը նշել է, որ դիմողը ընդհանրապես չի վճարել տուգանքը և ներպետական դատական ծախսերը: Ավելին, Կառավարությունը նշել է, որ տուգանքի գանձումն անհրազոր թեմ է դարձել ժամանակը բաց թողնելու հետևանքով, և իրենք ձեռնարկել են միջոցներ, որպեսզի ապահովվի, որ դատական ծախսերը չհավաքվեն, եթե Դատարանը գտնի, որ տեղի է ունեցել խախտում:

76. Դատարանն ընդունում է ա, բ. և գ. կետերով ներկայացված պահանջները: Հաշվի առնելով այս կապակցությամբ Դատարանի նախադեպային իրավունքը, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի կողմից դիմողին տրամադրված իրավաբանական օգնությունը՝ Դատարանը գտնում է, որ նա իրավունք ունի ծախսերի և ծախքերի դիմաց ստանալու փոխհատուցում՝ 530.000 իսլանդական կրոն գումարի չափով:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ՝ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Վճռել է միաձայն, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

2. Վճռել է, ութ ձայնով ընդդեմ մեկի, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

3. Վճռել է միաձայն, որ Իսլանդիան եռամսյա ժամկետում դիմողին պետք է վճարի 530.000 իսլանդական կրոն՝ ծախսերի և ծախքերի դիմաց:

4. Մերժել է միաձայն արդարացի բավարարման մնացած պահանջները:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով և հրապարակված է դռնբաց նիստում, Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 1992թ. հունիսի 25-ին:

Ռոլվ Ռիսդալ
Նախագահ

Մարկ-Անդրե Էյզեն
Քարտուղար

Կոնվենցիայի 51-րդ հոդվածի 2-րդ կետի և Դատարանի կանոնակարգի 51-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն՝ պրն Գարդար Գիսլասոնը ներկայացրել է իր առանձին հատուկ կարծիքը, որը հանդիսանում է սույն վճռի հավելվածը:

ԴԱՏԱՎՈՐ ԳԱՐԴԱՐ ԳԻՍԼԱՍՈՆԻ ՄԱՍՆԱԿԻ ՉՀԱՍՏՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Ցավոք, ես չեղվել եմ մեծամասնության կարծիքից 10-րդ հոդվածից բխող վերջնական հարցի կապակցությամբ, թե արդյոք գործի կոնկրետ հանգամանքներից ելնելով (տես, վճռի 65-69 կետեր)՝ միջամտությունը, «անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում»:

Հանցագործությունների կատարման վերաբերյալ մեղադրանքները կամ ճշմարիտ էին, կամ կեղծ: Որոշակի «անհրաժեշտություն կա» կանխելու լուրջ հանցագործությունների կապակցությամբ կեղծ մեղադրանքները՝

այլոց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու համար: Ուստի զրպարտության վերաբերյալ գործերում, իմ կարծիքով, խիստ էական է, թե արդյոք ներկայացված լուրջ հանցագործությունների կապակցությամբ մեղադրանքները՝ դրանց ճշմարտացիության առումով, ներկայացվել են բարի կամեցողությամբ:

Չնայած դիմողը 1983թ. դեկտեմբերի 7-ի իր հողվածում որպես ելակետ հիմք է ընդունել շատ քննարկված Սկաֆթի Ջոնսոնի գործը, նա ընդգծել է, որ ինքն այն համարում է «քիչ կարևորության»։ Իր համար իրական հիմնախնդիրն «ավելի մեծ և ավելի անհանգստացնող է»։ Նա հղում է կատարում նաև մեկ այլ գործի, որը վերաբերում է մի քանի տարի առաջ հիվանդանոցում տեսած մի երիտասարդի, որն անդամալույծ էր դարձել Ռեյկյավիկի ոստիկանների կիրառած բռնի մեթոդների պատճառով: Իմ կարծիքով, նա սրանով նկատի է ունեցել, որ այս «գործը» որևէ ձևով չի հետաքննվել և որևէ ոստիկան չի հարցաքննվել: Դիմողը որևէ կերպ չի հիմնավորել այս պատմությունը, և չկա որևէ ապացույց առ այն, որ երիտասարդին իրականում վնասվածքները պատճառել են ոստիկանները: Ջրպարտության գործով դիմողը դատապարտվել է ոչ միայն պախարակելու և վիրավորանքների համար, այլ նաև ոստիկաններին լուրջ հանցագործությունների կապակցությամբ վերոհիշյալ մեղադրանքները ներկայացնելու համար, որոնք եթե իրականում կատարված լինեին, կհանգեցնեին խիստ պատասխանատվության:

Ելնելով վերոշարադրյալից՝ ես ամբողջովին կիսում եմ Դատարանի հիմնավորումները Բարֆոլդն ընդդեմ Դանիայի գործով 1989թ. փետրվարի 22-ի վճռում (Շարքեր Ա, թիվ 149, էջ 14, կետ 35): Պրն Թյորգեր Թյորգերսոնը դատապարտվել է ոչ թե քննադատելու, այլ Ռեյկյավիկի ոստիկանների դեմ զրպարտչական մեղադրանքներ ներկայացնելու համար, որոնք կարող էին ոչ միայն հասարակության աչքում ցածրացնել նրանց, այլ նաև ատելություն և արհամարհանք առաջացնել, և այդ մեղադրանքները տպագրվել էին առանց հիմնավորող ապացույցների կամ այլ արդարացման:

Ուստի, ըստ իս, տվյալ գործի հանգամանքները վկայում են, որ 10-րդ հողվածի խախտում տեղի չի ունեցել:

Ես 50-րդ հողվածի դեպքում քվեարկել եմ 10-րդ հողվածի վերաբերյալ մեծամասնության եզրակացության հիման վրա: